ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

Ա. ՔԱԼԱԾՅԱՆ
փիլիսոփայական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱԶԳ-ԿՐՈՆ-ԵԿԵՂԵՑԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես տեսական, այնպես էլ պատմական տեսանկյուններից ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հիմնահարցը հեռազոտական հսկայական դաշտ է, որը մեր օրերում ևս չի կորցրել իր արդիականությունը: Այսօր էլ մեզանում կարելի է հանդիպել քննարկվող հիմնահարցի և՛ արմատական, և՛ պահպանողական, և՛ անգամ մերժողական տեսակետների: Եւ քանի որ առաջադրված լուծումներով վիճաբանող կողմերը հավակնում են «յուրահատուկ համապարփակության», նրանց դիրքորոշումների հակամետությունն ամենայն սրությամբ դրսևորվում է հատկապես աշխարհայացքային տեսանկյունից: Դա է պատճառը նաև, որ այդ հիմնահարցի ամբողջական քննարկումը երբեմն իրականացվել է առանց համապատասխան նրբերանգների եւ առանձնահատկությունների հաշվառման: Այնինչ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության օբյեկտիվ արժեւորումը թելադրում է հաշվի առնել և՛ ազգահոգեբանական այն յուրահատուկ պայմանները, որոնց շրջանակներում գոյավորվել եւ գործառել են այդ հարաբերությունները, և՛ այն, որ ազգը եւ կրոնը պատմականորեն հանդես են եկել որպես յուրահատուկ երկմիասնության՝ փոխադարձ կապի եւ հարաբերության մեջ գտնվող հասարակական-պատմական երեւույթներ, և՛ այն, որ բազմադարյա տեղայնացման շնորհիվ կրոնն իր կնիքն է դրել ազգային ինքնության, ազգային հոգեբանության եւ հոգեկերտվածքի վրա, դարձել է ազգային ինքնագիտակցության կարեւորագույն բաղադրիչներից մեկը, և՛ այն, որ պատմականորեն հանդես գալով ազգակարգավորիչ կարեւորագույն դարրի որակով, կրոնը վերածվել է ազգապահպանության կարեւոր բաղադրատարրերից մեկի, և՛, ի վերջո, իրականության կրոնական արտացոլման առանձնահատկությունները:

Եւ ինչպես փաստական նյութն է վկայում քննարկվող հիմնահարցի վերաբերյալ իր հավասարակշռված մոտեցումներով աչքի է ընկնում հատկապես Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցակարգը:

Այս պնդումը սերտորեն կապված է հիշյալ հայեցակարգի հիմնադրույթների վերլուծության հետ եւ բխում է դրանց բովանդակությունից: Այդ տեսանկյունից առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ այն փաստին, որ քննարկվող հայեցակարգի հիմքում ընկած են աստվածաբանական մոտեցումները, որոնք սակայն սերտորեն շաղկապված

են հիմնահարցի տեսական լուծումների հետ: Կարելի է պնդել նաև, որ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության՝ Գարեգին Բ Կաթողիկոսի լուծումները գործնականում հանդես են գալիս որպես ասպվածաբանական եւ տեսական լուծումների յուրահատուկ ներդաշնակ հայեցակարգ, որտեղ հավասարապես կարեւորվում եւ գնահատվում են ուսումնասիրվող հիմնահարցերի բոլոր տեսանկյունները եւ որոնցում չկան արմատական, միակողմանի կամ ծայրահեղ լուծումներ: Միանգամայն հասկանալի է նաեւ, որ նման հավասարակշռված ու անկողմնակալ մեթոդաբանության կիրառմամբ վերլուծաբան Հայրապետը հիմնահարցի արժեւորման գործում մեկնակետային է համարում հոգեւոր իրականությունը եւ քննարկվող հիմնահարցի բոլոր տեսանկյունների համակարգված արժեւորմանն անդրադառնում է այդ պրիզմայով: Եւ այդ տեսանկյունից միանգամայն բնական ու հասկանալի է, թե առաջադրված հայեցակարգում ինչու է մեծ տեղ հատկացվում **եկեղեցական քրիստոնեության** էությունը պարզաբանող այն հիմնախնդիրներին, որոնք սերտորեն շաղկապված են ազգային ինքնության, ազգային ինքնագիտակցության, հոգեբանության, հոգեկերտվածքի, բարոյական ընկալումների, ազգամշակութային ավանդությունների եւ համալիր այլ հիմնահարցերի հետ:

Այդ համատեքստում պետք է քննարկել կրոնի եւ հայ ժողովրդի հոգեւոր ինքնության սերտ կապը բնութագրող Վեհափառի այն մոտեցումը, թե «Քրիստոսի որդեգրեալներն ենք երկու հազար տարիներ ի վեր, սուրբ ընձիւղը՝ «խաղաղութեան աւետարանիչների» ձեռքով հայրենի մեր հողում սերմանուած հունդերի: 1700 տարիներ առաջ երկնքի դռները բացուեցին Հայոց երկնակամարում: **Նահատակների արեամբ սրբացեալ մեր երկրի սրտում Միածին Որդու աստուածային էջքով «եկն անանցանելի լոյսն առ առկայծելի ճրագն», ու Լուսաւորչի հաւատի հիմերի վրայ բարձրացաւ հրաշակերտ Տաճարը Սուրբ Էջմիածնի՝ ինքնութեան եւ գոյութեան խորհուրդը Թորգոմական տան, Հայկեան մեր զարմի»**[1]: Դրանով հայոց ընդհանրական Հայրապետը փաստում է, որ արմատավորվելով ազգային կյանքում, քրիստոնեությունն իր տեսանելի հասարակության՝ եկեղեցու հետ հաստատուն տեղն է գտել հայ ժողովրդի հասարակական եւ մշակութային կյանքը բնութագրող հենքային բոլոր այն ոլորտներում, որոնք իրենցով պայմանավորում են ազգային ամբողջականությունը բնորոշող հիմնարար հատկությունները եւ ըստ այդմ որոշում են վարքագծի կարծրատիպերը: Անհնար է չնկատել նաեւ, որ քննարկվող հայեցակարգում կրոնն ամենեւին էլ չի դիտարկվում սոսկ որպես ուսմունք կամ վարդապետություն: Գարեգին Բ Վեհափառի արժեւորումներում **կրոնը դիտարկվում է որպես կյանք, որպես տեսանելի այնպիսի իրականություն**, որի հենքի վրա բարձրանում եւ ամբողջանում է «մեր գոյության եւ ինքնության խորհուրդը»: Արժեքային այդ մոտեցմամբ իբրեւ հոգեւոր իրականություն **կրոնը որակվում է որպես ազգամշակութային առանձնահատկությունները պայմանավորող կարեւորագույն գործոններից մեկը, իսկ մյուս կողմից՝ որպես ազգային կյանքը բնութագրող դետերմինանտ**:

Ընդ որում, առաջադրված փաստարկները հետեւում են հստակ տրամաբանության եւ հենված են ինչպես ասպվածաբանական ընկալումների, այնպես էլ պատմականության եւ հասարակական կյանքը բնութագրող այլ օրինաչափությունների հետեւողական վերլու-

1 «Էջմիածին», 2000, Բ, էջ 5: Այս եւ հետագա ընդգծումները մերն են- Ա. Ք.:

ծության վրա: Ընդհանրական ու օբյեկտիվ այդ մեթոդաբանությամբ է պայմանավորված նաև այն, որ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության արժեւորումներում Գարեգին Բ Հայրապետը մեծապես կարեւորում է նաև **ազգային կյանքում կրոնի միավորիչ գործառույթը**, ինչպես նաև ազգային ինքնության հատկանիշների ձեւավորման գործում ունեցած անուրանալի ներդրումը: «... 2000 տարի Քրիստոս քայլում է հայոց պատմության ընթացքով, - գրում է Վեհափառն այդ կապակցությամբ, - լցնելով հայ կյանքը խաղաղության սիրով ու ազատության բաղձանքով, Հարության վստահությամբ ու ստեղծագործ ուժով: Մահաբեր փորձությունների դիմացանք, արարեցինք ու խնդրեցինք՝ Տեր, «յաւել մեզ հաւատս» (Ղուկ. ԺԷ 5): Հանուն հավատի մարտադաշտ ելանք, նահատակվեցինք ու մեր հայացքը երկնքին հառած նորից խնդրեցինք՝ Տեր, «յաւել մեզ հաւատս»: Աշխարհն աշխարհ սփռված՝ մեկ ու միասնական մնացինք հավատով, հայոց հոգիներին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավազանի դրոշմումով՝ երիցս խնդրելով՝ Տեր, «յաւել մեզ հաւատս»[2]: Հայոց հոգեւոր կյանքի բովանդակային անբաժան տարրը հանդիսացող հավատքային գործոնը եւ «Սուրբ Եկեղեցու ավազանի դրոշմը» այսպիսով, որակվում են որպես հայ ժողովրդի ազգամիավորիչ կարեւորագույն հատկանիշներ: Վերլուծաբանը հավելում է նաև, որ կրոնն ու եկեղեցին սերտորեն կապված են ինչպես անհատի, այնպես էլ հավաքականության ազգակրոնական բնութագրության հետ: Այդ ըմբռնումն է նաև այն հիմնարար պատճառը, որ ազգային եւ անհատական ինքնագիտակցության մեջ կրոնը մի կողմից ընկալվում է որպես **ազգամիավորիչ հատկանիշ**, իսկ մյուս կողմից ընդհանրական այդ առանձնահատկության շնորհիվ դիտարկվում է որպես **ազգային ինքնագիտակցության եւ ազգակրոնական ինքնության ձեւավորման գործոն հիմքերից մեկը**:

Արդի տեսական կրոնագիտության եւ մշակութաբանության հանրաճանաչ տեսակետի համաձայն ազգակրոնական ինքնությամբ բնորոշվում են ազգային ամենատարբեր մշակույթներ: Անժխտելի է համարվում նաեւ, որ ընդհանրական այդ երեւույթը պայմանավորված է նրանով, որ դարավոր տեղայնացման շնորհիվ միեւնույն տարածքում ապրող եւ միեւնույն դավանանքով կապված ժողովուրդների ազգային առանձնահատկությունները ձեւավորվում են ազգայինի եւ կրոնականի համադրմամբ: Իսկ այդ համադրությունն, իր հերթին, իրենով պայմանավորել է համապատասխան **կրոնական ինքնությունը**: Փաստերը վկայում են, որ այս հարցում համահունչ գնահատումներով աչքի են ընկնում նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերլուծական մոտեցումները: Հավատքայինի եւ պատմականի օբյեկտիվ համադրությամբ նա փաստում է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով մեր ժողովուրդը ոչ միայն առաջնորդվել է դեպի համազգային մկրտություն, իսկ քրիստոնեությունն առաջին անգամ Հայաստանում է պաշտոնական ճանաչում գտել, այլեւ հավելում է, որ «Պետական հովանին վայելող **Հայ Եկեղեցու ավազանից ծնունդ առավ Աստծո նոր ժողովուրդ՝ հարության հավատով ապրող ու արարող, հարության հավատով գոյատեւող**»[3]: Դարգաբանելով արժեքային այդ մոտեցումը նա հավելում է նաեւ, որ դառնալով Աստծու ժողովուրդ եւ տեսանելի եկեղեցի «Հայկյան մեր զարմը» ոչ միայն չկորցրեց իր ազգային ինքնությունը, այլեւ այն միավորեց քրիստոնեությանը եւ դրանով մեր ժողովրդի առջեւ կանգ-

2 «Էջմիածին», 2001, Ժ-ԺԱ, էջ 35:
3 Անդ, էջ 31-32:

նած դարավոր փորձություններին ընդդեմ ձեռք բերեց **ազգամիավորիչ հզոր գործոն, ինչպես նաեւ ազգակրոնական ինքնությունը բնութագրող անանց արժեք**: Ահա թե ինչու վերլուծաբան Հայրապետն այդ եզրականգումը վավերագրում է այն պնդմամբ, որ **ազգակրոնական նոր ընդհանրություն ձեւավորելուց հետո** «... հայոց պատմությունը դարձավ հավատի պատմություն»[4]: Ճիշտ այդպես էլ, պնդում է նա, ազգակրոնական ինքնության հենքի վրա է, որ «Հանուն հավատի, որ նույնն է, թե՝ հանուն հայրենյաց, նրանք (քրիստոնյա հայերը՝ Ա. Ք.) նահատակվեցին, աքսորվեցին ու զրկանքներ կրեցին, **քանզի քրիստոնեական հավատը կրում էին որպես մաշկի գույն, որպես հայության հատկանիշ**»[5]:

Այս հպանցիկ վերլուծությունն անգամ ակնհայտ կերպով վկայում է, որ Հայոց ազգընտիր Վեհափառ Հայրապետը **կրոնական ինքնությունը դիտարկում եւ արժեւորում է որպես ազգային գիտակցության եւ հոգեբանության կատեգորիա**, որի բովանդակությունը մի կողմից որոշվում է հայ ժողովրդի կողմից քրիստոնեական գաղափարների եւ արժեքների յուրացման աստիճանով, իսկ մյուս կողմից՝ կրոնական այդ արժեքներին «պատկանելու ինքնագիտակցությամբ»: Գարեգին Բ Կաթողիկոսն ազգակրոնական ինքնության, կամ որ նույնն է «քրիստոնեությանը պատկանելու ինքնությամբ» է բացատրում նաեւ քրիստոնեական արժեքների եւ աշխարհընկալման նկատմամբ հայ ժողովրդի անսասան հավատարմությունը, որի մասին գրում է. «Դարեր են անցել, Հայաստանը տեսել է ե՛ւ փառքի օրեր, ե՛ւ ավեր ու կոտորած, սակայն **անսասան է պահել քրիստոնեական հավատքը** ...»[6]: Այդ պնդումից ակնհայտ է նաեւ, որ հավատքային գործոնը որակվում է որպես ազգային ինքնության կարեւորագույն բաղադրատարր, որպես ազգակրոնական պատկանելություն, որի պատճառով **վերլուծաբան Հայրապետի հայեցակարգում հավասարապես շեշտադրվում են «կրոնական ինքնության» ինչպես անհատական, այնպես էլ ազգային եւ հասարակական մակարդակները**, այլ կերպ ասած՝ **ե՛ւ կոնկրետ կրոնատածությունը, ե՛ւ հավաքականության (ազգի) հավատքային ինքնությունը**: Ահա թե ինչու նա հավատում է, որ դարավոր տեղայնացման արդյունքում ձեւավորված ազգակրոնական ինքնությամբ, հավասարապես նաեւ ազգակրոնական հոգեկերտվածքով է պայմանավորված այն, որ իբրեւ Աստծու ժողովուրդ քրիստոնեությունը «մաշկի գույն» հռչակած հայ ժողովուրդը անդավաճան կերպով հանդես է եկել որպես տեսանելի հասարակություն եւ եկեղեցի: «Դարերի փորձությունների մեջ եղել է, որ մեր ժողովուրդը կորցրել է ազգային պետականությունը, - գրում է Վեհափառն այդ կապակցությամբ, - բայց միշտ համախումբ է մնացել Հայ Եկեղեցու օրհնության ներքո ու հավատարիմ՝ **քրիստոնեական իր ինքնությանը**: Ազգային պետական դրոշի ներքո թե առանց դրա, **Հայաստանը եղել է եւ է՛ քրիստոնեության անառիկ պատվարն ու բերդը Արեւելքի սահմանագծին**»[7]:

Այդ ամենը վկայում են նաեւ, որ Հայոց ընդհանրական Նվիրապետի կողմից կրոնական ավանդությունը դիտարկվում է ոչ թե ինքնին, առանձնության մեջ, այլ՝ ազգային հո-

4 Անդ, էջ 35:
5 «Էջմիածին», 2001, Ե, էջ 31:
6 «Էջմիածին», 2001, ԺԲ, էջ 28:
7 «Էջմիածին», 2001, Ժ-ԺԱ, էջ 31-32:

գերանությունը եւ ինքնությունը բնութագրող կարեւորագույն հատկանիշների հետ ունեցած սերտ կապի մեջ: Ու նաեւ այն, որ նրա կողմից առաջադրված հայեցակարգում ազգային առանձնահատկությունները եւ ինքնությունը բնութագրող հասարակական ու մշակութային այլ գործոններին համահավասար կրոնական ավանդությունը համարվում է առանցքային նշանակություն ունեցող բնութագրական այն որակներից մեկը, որն ազգայինը «լցնում է կոնկրետ բովանդակությամբ»: Այդ ամենի ընդհանրացմանը Վեհափառը գրում, թե «Հավատակերտ այն հաղթական օրերից, երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Արածանիի ջրերում մկրտեց Հայոց Տրդատ թագավորին, արքունիքը, զորքն ու ժողովրդին եւ քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն, **հայոց պատմությունը դարձավ հավատի պատմություն** ...»[8]:

Զափազանց կարեւոր է քննարկվող հայեցակարգի եւս մեկ առանձնահատկություն: Վերլուծական այդ մոտեցմամբ Գարեգին Բ Վեհափառ Հարապետը միաժամանակ փաստում է, որ ազգային ինքնության, ազգամշակութային, ազգային հոգեբանության եւ այլ ոլորտներում կրոնի գործառնական դերն ամենեւին ժամանակային պարամետրեր չունի: Եւ հաջորդական քայլերով պարզաբանելով հիմնահարցի էությունը եւ ուղղվածությունը, վերլուծաբան Հայրապետը ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության առաջադրված լուծումներում հիմնավորում է նաեւ հարաբերվող կողմերի ինքնությունը եւ յուրատիպությունը: Միաժամանակ նա մերժում է նաեւ հիմնահարցը հավատի եւ բանականության հակադրության դիրքերից լուծելու արատավոր մեթոդաբանությունը եւ վերջինիս հակադրում է ազգային կյանքում կրոնական գործոնի համագործակցական դերի մասին տեսակետը: Ահա թե ինչու յուրահատուկ ձեւով կամրջելով անցյալն ու ներկան, վերլուծաբանը պարզաբանում է. «Ազգովի շատ իղձեր ու նպատակներ ունենք, որոնց իրականացման ճանապարհը պիտի անցնենք այդ նույն հավատքով, «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն» մեր դարավոր աղոթքով, մեր հայրերից ժառանգություն ստացած միաբանության սուրբ ուխտով, հանձնառությամբ, նվիրումով ու սիրով»[9]:

Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այդ ամենին զուգընթաց Վեհափառի մոտեցումներում կրոնական ավանդությունը համակողմանի քննարկվում եւ արժեւորվում է նաեւ ազգային ինքնությունը բնութագրող կարեւորագույն այնպիսի բաղադրարարրերի շարակարգում, ինչպիսիք են վարքագծի ազգային կարծրատիպերը, ազգամշակութային ընդհանրական որակները եւ այլն: «Երկու հազարամյակ Հայ Եկեղեցին իր զավակներին փոխանցում է Աստվածգիտության լույս, - այդ կապակցությամբ գրում է Վեհափառը, - Բարին ընտրելու, Բարին գործելու ազատություն, արարելու կամք ու հարատեւելու զորություն, որպեսզի չզգանք երբեք հոգին կենդանացնող երկնառաք իոսքի կարոտ, չկորցնենք տենչանքն հավերժի, չապրենք ոգու սով. որ լցվենք սիրով հայրենյաց, ուժով արի ու ստեղծագործ, եւ մեր ընթացքը երրորդ՝ նոր հազարամյակ առաջնորդվի կյանքն իմացյալ անմահություն է գաղափարականով»[10]: Նա միաժամանակ փաստում է նաեւ, որ հասարակական-բարոյական գործոններին համահավասար եկեղեցական քրիստոնեությունն անու-

8 Անդ, էջ 35:
9 «Էջմիածին», 2006, Զ, էջ 26:
10 «Էջմիածին», 2001, Ե, էջ 31:

բանալի դեր է կատարել նաև ազգամշակութային ինքնության հաստատման գործում: Ու թեև Հայ եկեղեցու բարձրագույն այդ առաքելությունն այնքան ակնհայտ է ու հանրաճանաչ, որ լրացուցիչ պարզաբանումների կարիք չունի, այդուհանդերձ Վեհափառ Հայրապետն իր արժեքային մոտեցումներում ազգային պատմությունը որակելով որպես «հավատի պատմություն», միաժամանակ փաստում է նաև, որ «Աստուածատես ազատ հոգու շնորհներով են ծնունդ առել Մաշտոցեան ոսկեդէնիկ մեր գրերը, ... ու Սահակ-Մեսրոպեան կրթութեան ու լուսաւորութեան սուրբ յիշատակները»[11], որ «Քրիստոսի ազատության խաչանիշ դրոշի» ներգործությամբ «... ընդամէնը մէկ ու կէս դարում կերտեցինք հայոց ինքնաճանաչման, ինքնարտայայտման ու ինքնահաստատման Աստուածազգեաց դպրոցը»[12], եւ որ հայ ոգու հաղթության անմահ այդ դպրոցի, հայ հոգու, սրտի ու մտքի լուսավորության այդ ավանդների վրա խարսխված ազգամշակութային գործառնության շնորհիվ հայոց եկեղեցական քրիստոնեությունը դարձել է նաև «... հավատով կանգնեցված վանքերի ու եկեղեցիների պատմություն, հավատով ծնունդ առած Մաշտոցյան գրերի, տիեզերքի անհունն ու մարդու հոգին քնող ասպվածճանաչ մտքի, հավատավոր հոգուց սղկված երգ ու քերթվածի, մագաղաթին ծաղկած գրչության, քարը շնչավորած պատկերագրության պատմություն»[13]:

Այդ ամենը թույլ են տալիս պնդել, որ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության Գարեգին Բ Կաթողիկոսի հայեցակարգում կրոնական ավանդությունը, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել եկեղեցական քրիստոնեությունը ոչ թե հակադրվում է ազգային առանձնահատկությունները պայմանավորող հասարակական-քաղաքական, մշակութային եւ օբյեկտիվ այլ գործոններին, այլ յուրահատուկ ձեւով զուգորդվում են դրանց, եւ այդ դիրքերից էլ պարզաբանվում է, թե նշված համագործակցության հիման վրա կրոնական ավանդությունը ինչպես է պայմանավորում ազգակրոնական ինքնությունը, ինքնագիտակցությունը, ազգամշակութային տարբերակիչ գծերը եւ այլն: Վերլուծաբան Հայրապետը միաժամանակ հիմնավորում եւ ցույց է տալիս, որ ազգակրոնական առանձնահատկությունների համախմբությունն էլ պայմանավորում է համանուն այլ ընդհանրությունների հետ ունեցած տարբերությունները: Այլ կերպ ասած, ըստ Վեհափառ Հայրապետի հայեցակարգային հիմնադրույթների, **կրոնը կամ եկեղեցական քրիստոնեությունը այն հիմնարար գործոններից է, որը ոչ միայն պայմանավորում է ազգային ինքնությունը եւ ազգամշակութային ավանդությունները, այլեւ որոշակի սահմաններում ընկած է ազգատարբերակիչ հիմնարար հատկանիշների ձեւավորման հիմքում**: Եւ այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ եւ տրամաբանական է Հայ եկեղեցու ինքնությունը եւ ինքնանկախությունը պաշտպանելու հորդորը, որը հայ ժողովրդի պատմական զարգացման խորազնին ու համակողմանի ուսումնասիրությամբ փաստում է. «**Հայ Եկեղեցու անկախությունը դարձել է մեր ժառանգության սրբություններից մեկը, որը հայ հոտն ու հայ հովիվը պահել ու պահպանել են ամենայն նախանձախնդրությամբ ու ջանադրությամբ՝ ասպվածաշնորհ ազատության եւ անկախության այդ ընկալումով հարգելով ուրիշի՝**

11 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարցազրույցներ պաշտոնական (1999-2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 164:

12 Անդ, էջ 110:

13 «Էջմիածին», 2001, Ժ-ԺԱ, էջ 35:

նույնքան թանկ եւ նույնքան գնահատելի ինքնությունն ու առանձնահատկությունը»[14]:

Այդ ամենով հանդերձ պետք է նկատել նաեւ, որ Վեհափառ Հայրապետը հեռու է ազգային ինքնության հիմքում ընկած կրոնական հատկանիշները բացարձակացնելու եւ կամ այլ հատկանիշները սպոռադասելու ծայրահեղ մոտեցումից: Նրա կողմից հիմնահարցի լուծմանն ուղղորդված հավասարակշիռ մոտեցումը կրոնականին համահավասար ներազգային եւ ազգամիջյան հարաբերություններում հաշվի է առնում եւ կարեւորում է հասարակական, քաղաքական, մշակութային եւ օբյեկտիվ այլ գործոնները: Ավելի ճիշտ կլինի ասել **պատմական նյութի համակարգված վերլուծությամբ նա արձանագրում է անհերքելի այն փաստը, որ օբյեկտիվ (աշխարհիկ) գործոններին համահավասար ազգը բնորոշվում եւ ինքնորոշվում է նաեւ ներքին՝ կրոնական բաղադրատարրերով, եւ այդ պատճառով է, որ կրոնը հանդես է գալիս նաեւ ազգապահպանության կարեւորագույն գործոնի որակով**: Այդ իրողությունը վերլուծաբան Հայրապետը փաստում է այն պնդմամբ, որ «Պատմության մեջ մեր Սուրբ Եկեղեցին հավատարմորեն խնամել ու առաջնորդել է մեր ժողովրդին, դիմագրավել հոգեկործան հողմերի, չարաղետ փորձությունների եւ նույն հաղթականությամբ պիտի շարունակի փրկագործական իր առաքելությունը: Եկեղեցու զորությունը համայն հավատացյալ ժողովրդի ճշմարիտ հավատքն է: Ճշմարիտ հավատքով միավորվում եւ լինում ենք տաճար Սուրբ Հոգու»[15]: Եկեղեցական քրիստոնեության ազգապահպան այդ առաքելությունը, բնականաբար, չէր կարող համապատասխան հետք չթողնել ազգային ինքնագիտակցության եւ ազգային հոգեբանության վրա: Այդ ճանապարհով է կրոնը սերտաճել եւ դարձել ազգային ինքնության եւ հոգեկերտվածքի անբաժան տարրը: Եւ միանգամայն օրինաչափ է, որ այդ ամենի արժեւորմամբ Գարեգին Բ Վեհափառը հանրագումարելով պնդում է, որ հոգեւոր-հասարակական այդ իրողությունների ազդեցությամբ ձեւավորվել է նաեւ ազգ-կրոն նույնացման (իդենտացման) պատկերացումը, որով պայմանավորված «**Մեր ժողովուրդը առաքելական ժամանակներից նույնացրել է իր կյանքը առ Քրիստոս հավատքի հետ**: Տիրոջով զորացրել է իր նկարագիրը ու բարձր պահել իր մշակույթն ու արժեքները՝ դարեր ի վեր, անլուր փորձություններին ու հալածանքներին հանդիման՝ արդյունավորելով իր զավակների վկայության ու արյան սերմերով»[16]:

Այդ ամենը թույլ են տալիս ընդհանրացված պնդելու, որ Գարեգին Բ Հայրապետի հայեցակարգում ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերությունն առաջին հերթին դիտարկվում է որպես **ազգային եւ կրոնական սկիզբների այնպիսի սերտաճում, որը բնականոն ճանապարհով հանգեցնում է ազգակրոնական ընդհանրության**՝ ազգության եւ միեւնույն դավանանք ունեցող անհատների սերտ միավորմանը: Այդ տեսանկյունից անառարկելի պետք է համարել նաեւ, որ ազգը բնութագրող կարեւորագույն հատկանիշները պատմականորեն հանդես են գալիս կրոնական գործոնի հետ ունեցած սերտ կապի մեջ եւ որ գործոնների այդ համախումբն էլ իրենով պայմանավորում է «ազգային հատկանիշների» բովանդակությունը, նրան որոշակի ուղղվածություն է հաղորդում: **Ճիշտ նույն ձեւով կրո-**

14 «Էջմիածին», 2000, ԺԱ, էջ 8:
15 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 8:
16 «Էջմիածին», 2005, Թ, էջ 7:

նական ավանդությունն անուրանալի դեր է կատարել եւ այսօր էլ շարունակում է կատարել ազգային վարքագծի կարծրատիպերը եւ ազգամշակութային ընդհանրությանը բնորոշ ռեակցիայի եւ իրավիճակային գործունեության հավանական սցենարները ամրողջացնելու գործում: Եւ վերլուծաբան Հայրապետի հայեցակարգում այդ փաստերը ոչ միայն որոշակի արժեւորում են ստանում, այլեւ սերտորեն շաղկապվում են հավատքային գործոնի գործառնական առանձնահատկությունների հետ: Այդ փաստերի վրա կառուցված դատողությունների տրամաբանական ընթացքը միանգամայն բնականոն ճանապարհով հանգեցնում է հայ ժողովրդի անցյալն ու ներկան շաղկապող հավատքային գործոնի արժեւորմանը: Ահա թե ինչու միանգամայն օրինաչափ պետք է համարել նաեւ Վեհափառ Հայրապետի հանրագումարային այն հետեւությունը, որ **հավատքային գործոնը հայ ժողովրդի համար վերածվել է ժամանակները շաղկապող գործոնի**, որի ընդհանրացման հիման վրա դիմելով ժողովրդին Գարեգին Բ Հայրապետը գրում է. «Հայրական պատգամ ու կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զաւակներին «հաւատի բարի մարտը» մղելու եւ նորոգելու հոգիներում «սուրբ սրտից, բարի խղճմտանքից, անկեղծ հաւատից» բխած Սէրը: Սէրը առ մեր հայրերի Աստուած, սէրը առ Հայրենիս, սէրը առ հաւատքի անսասան վէմ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մեր հոգու ծննդավայրն ու տապանը փրկութեան, մեր միութեան ակունքը եւ յարատեւութեան շնորհը մեզ: Երկիւղածութեամբ պահպանենք մեզ աւանդուած 2000-ամեայ սրբազան ժառանգութիւնը: Նոր ճանաչումով, նոր արժեւորմամբ, նոր ներշնչանքով կեանք դարձնենք՝ «զի ժամանակ է սկիզբն լինելոյ» հայոց նոր դարձի: **Ազգային արդար իղձերի իրագործման ճանապարհին լինենք հիմնամուր կամուրջ՝ հայոց անցեալը, ներկան ու գալիքը կապող**»[17]:

Քննարկվող հիմնահարցի համակարգված արժեւորման տեսանկյունից չափազանց արժեքավոր են նաեւ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողմից առաջադրված ապագայաբանական լուծումները: Փաստական նյութի վերլուծությունը վկայում է, որ վերլուծաբանի կողմից առաջադրված «հայոց անցյալը, ներկան եւ ապագան շաղկապող հիմնամուր կամուրջի» մոդելը խարսխվում է «ազգային իրաւունքի» եւ «Ավետարանի կենսապարգեւ խոսքի» միաձույլ շաղախով, ինչը, նրա համոզմամբ, միաժամանակ ազգային բազմադարյա իղձերը եւ երազանքներն իրականացնելու հաստատուն ճանապարհն է[18]: Եւ որ չափազանց կարեւոր է, **ազգային կյանքի անցյալ-ապագա ընթացքը նա տեսնում է ազգ-հայրենիք-ազգային եկեղեցի ներդաշնակ հարաբերության եւ համագործակցության մեջ**: Ընդ որում, աստվածաբանական տեսլականի դիրքերից ազգի, իբրեւ հավաքականության դերն այդ հարաբերություններում նույնացվում է հայրենասիրության եւ եկեղեցասիրության խորհրդանիշ հանդիսացող «Վարդանանց ոգու հետ», որի նպատակ է հռչակվում Աստծու հետ Հայրենիքի եւ Եկեղեցու ուխտի վերահաստատումը: Այդ պնդումը փաստվում է վերլուծաբանի հետեւյալ տողերով. «... **Վարդանանց ոգով, աներկյուղ հավատով վերստին հաստատենք մեր ուխտը Աստծո հետ, մեր Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հետ**»[19]: Քննարկվող համատեքստում մատնանշելով

17 «Էջմիածին», 2000, Բ, էջ 5-6:
18 Տեմ «Էջմիածին», 2000, Բ, էջ 5:
19 «Էջմիածին», 2001, Ե, էջ 31:

«հարաբերվող փոխադարձության» նյութական (հայ ժողովուրդ) եւ հոգեւոր (եկեղեցական քրիստոնեություն) կրողներին, Վեհափառ Հայրապետի հայեցակարգում մեծապես կարեւորում է նաեւ ազգային եւ հասարակական գործոնների դերը: Ահա թե ինչու փաստելով ազգային եւ կրոնական գործոնների սերտ կապն ու «համագործակցական դերը», նա գրում է. «Իր զավակներով է պայծառ Սուրբ Էջմիածինը, իր զավակներով զորեղ՝ Մայր Հայրենիքը: Ուր էլ ապրենք՝ զավակներն ենք մեր հնագույն Հայրենիքի ու հոգեւոր մեր Հայրենիքի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ամուր պահենք ձեր հոգու մեջ հավատն առ Աստված եւ հայրենյաց արժեքները, որպեսզի հավերժական լինի մեր ժողովրդի ընթացքը, եւ մեր ճանապարհները՝ օրհնված: Աստծո ողորմության շնորհով ապրել ենք ու կանք, Աստծուն ապավինած հաղթահարել ենք մեզ բաժին ընկած ամեն փորձություն եւ հաճախ հարություն ենք առել մոխիրներից: Ուրեմն, Աստծո հետ մեր հաղթության պսակը միշտ բաժինը դարձրեք մեր ժողովրդի: Դարձրեք յուրաքանչյուրդ ձեր կյանքի պսակը՝ հյուսված հոգեւոր-ազգային մեր արժեքներով, եւ Աստված կօրհնի ձեզ՝ անհատական ձեր կյանքում, եւ Աստված կօրհնի մեզ՝ հայրենական մեր կյանքում»[20]:

Այդ ամենը թույլ են տալիս փաստել նաեւ, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հայեցակարգում **ազգային միջավայրը դիտարկվում եւ արժեւորվում է որպես կրոնի գործառնության անհրաժեշտ պայման**: Եւ մեթոդաբանական այդ ելակետի դիրքերից նա ցույց է տալիս, որ ազգ-կրոն բազմաստիճան եւ բազմահարթ հարաբերությունների արդյունքում եկեղեցական քրիստոնեությունը գործառնելով ազգային միջավայրում, պատմականորեն հանդես է եկել նաեւ ներքին՝ ազգային հատկանիշների, լեզվի, հասարակության կազմակերպման ձեւերի, ազգային հոգեբանա-հոգեկերտվածքային բնութագրերի եւ «ազգաստեղծ» կարեւորագույն այլ գործոնի որակով: Եւ միանգամայն բնական է, որ այդ հիման վրա վերլուծաբանը Հայաստանում եկեղեցու բազմադարյա գործունեության օրինակով փաստում է նաեւ, որ տեղայնացման արդյունքում եկեղեցին իր արժեհամակարգ է ներառել այնպիսի գաղափարներ, որոնք իրենց գործառնական ամբողջության մեջ հստակորեն կողմնորոշված են դեպի ազգը եւ հասարակական պրակտիկայում դրսեւորվում են ազգայինի հետ ունեցած անքակտելի կապի եւ հարաբերության մեջ: Այդ սերտ առնչություններն արձանագրող վկայություններից մեկն այն է, գրում է վերլուծաբանը, որ «Դարերի փորձությունների մեջ, ազգային պետականության կորստի դառնագին պայմաններում Հայ Եկեղեցին անթեղել ու անաղարտ է պահել ազատության սրբազան գաղափարն ու ապրումը հայ հոգիներում եւ ոգեշնչել հայության «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» պայքարը»[21]: Նա հավելում է նաեւ, որ այդ սերտ կապը հավասարապես պայմանավորված է ինչպես հասարակական, այնպես էլ հավատքային գործոններով, ինչպես նաեւ դրանցով է պայմանավորված նաեւ այն, որ «Մեր ժողովուրդը եղավ բազմաչարչար, բայց նաեւ, բազմահաղթ, որովհետեւ կարողացավ ամուր մնալ Քրիստոսի սիրո ճանապարհներին, կարողացավ իր հանդեպ գործված չարիքները բարիով հաղթահարել՝ ստեղծելով ու կառուցելով»[22]:

Փաստական նյութի վերլուծությունը ակնհայտ կերպով ցույց է տալիս նաեւ, որ ազգ-

20 «Էջմիածին», 2003, ԺԲ, էջ 8:
21 «Էջմիածին», 2000, ԺԱ, էջ 8:
22 «Էջմիածին», 2004, Ե, էջ 34:

կրոն փոխհարաբերության իր մեկնաբանություններում կրոնական գործոնի դերն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կարևորում է հիմնարար մեկ այլ՝ **ազգամշակութային գործառնության** տեսանկյունից: Հայտնության սկզբունքների վրա հենված աստվածաբանական մոտեցմամբ մատնանշելով ազգամշակութային և կրոնական սկիզբների անքակտելի կապը, ինչպես և այն, որ դրանք փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին, վերլուծաբանը համակարգված մոտեցմամբ ցույց է տալիս, որ **ամեն մի ազգային մշակույթում գերիշխում են իրեն յուրահատուկ ազգամշակութային հաստատունները**: Դրանք հանդես են գալիս աշխարհընկալման և աշխարհի նկատմամբ ունեցած ընդհանրացված վերաբերմունքի տեսքով, վերածվում են արժեհամակարգի, ինչպես նաև ժողովրդի պատմական ճակատագրի գեղագիտական արտահայտման ձևի, որով մեծապես պայմանավորում են նաև ազգային աշխարհայացքը, հոգեբանությունը և հոգեկերտվածքը: Միանգամայն հիմնավոր ցույց է տրվում նաև, որ ազգամշակութային ընկալումները գեղագիտակցությանը բնորոշ պատկերավոր տեսքով արտացոլում են ինչպես կրոնի, այնպես էլ պատմության, աշխարհի պատկերի, անհրաժեշտի, պատահականի և մարդկային գոյության ու աշխարհընկալման հիմնարար այլ որակների մասին պատկերացումները: Եվ իբրև աշխարհի գեղագիտական ընկալման ու կրոնի անքակտելի կապի դասական օրինակ վկայակոչելով հայոց ազգային մշակույթի և քրիստոնեության կապը՝ Վեհափառը գրում է. «1700 տարիներ ի վեր կենդանարար ու սքանչելագործ խաչը Քրիստոսի ծաղկում է մեր լեռներին, մատյաններին, աստվածգիտության լույսով հրաշագործում հայի հոգու անդաստաններում, իմաստավորում հայության կյանքը, վառ պահում մեր մեջ ազատության տենչանքն ու արդարության սերը, նորոգում ոգին ստեղծագործ: Փորձությունների դեմ հանդիման խաչին ապավինած ապրեցինք, խաչով զինավառ մոխիրներից հառնեցինք, մահեր ոտնահարեցինք և հարուցյալ՝ ընտրեցինք բարին ու բարու հետ քայլեցինք»[23]: Վեհափառի համար անժամանակային ու անփոփոխ համարում ունեցող կրոնական գործոնի մշակութաստեղծ գործառնությունը փաստվում է նաև այն իրողության ընդհանրացման հիման վրա, որ «Աստվածատուր շնորհներից բիւյալ այդ բարի պտուղներից է քրիստոնեական մեր մշակույթը, որի փառավոր անդաստանում բազում գանձուց մեջ անգին գոհար է հայոց գիրն ու դպրությունը՝ սկիզբ առած երանելի Թարգմանիչ Վարդապետների տքնությամբ ու աղոթալի ջանքերով»[24]:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հայեցակարգում աստվածաբանական և տեսական մակարդակներով քննարկվում են կրոնի ազգամշակութային գործառնության այլ տեսանկյուններ ևս: Ի մասնավորի նա անդրադառնում է այն փաստի վերլուծական արժեորմանը, որ պատմական տեսական երևույթ լինելով՝ ազգամշակութային հաստատունները ոչ միայն պայմանավորում են ազգային հոգեկերտվածքը, այլև հանդես են գալիս յուրատիպ «ազգամշակութային արքետիպերի» տեսքով, որոնց կայացումը և պատմական փոփոխություններն իրականանում են կրոնական արժեհամակարգերի հետ ունեցած կապի մեջ: Այդ իրողությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հիմնավորում է հայոց ազգամշակութային արժեքների կայացման և զարգացման օրինակով և փաստում է. «Յարութեան յաղթական

23 «Էջմիածին», 2001, Ե, էջ 6:
24 «Էջմիածին», 2006, ԺԲ, էջ 19:

հաւատքը դարձրած արարող զօրութիւն, աղօթաբոյր մատեան, ծաղկեցինք, գիտութեան կաճառ վանքեր հիմնեցինք, դարերի մէջ մեզ բաժին ընկած փշոտ ճանապարհներին երգ ու բառով, գոյն ու քարով երկնեցինք զարմանահրաշ մշակոյթը մեր»[25]: Վեհափառը հավելում է նաեւ, որ ազգամշակութային արժեքները ոչ միայն կարող են կրոնական բովանդակություն ունենալ, այլեւ՝ կրոնական «ձեւակերպում», քանի որ լինելով չափազանց դինամիկ եւ շարժուն համակարգ, հոգեւոր եւ հասարակական պայմանների ազդեցությամբ կարող է հանդես գալ նաեւ որպես կրոնական (հավատքային) երեւույթների անմիջական կրող: Ահա թե ինչու հայոց քրիստոնեական մշակույթի համակողմանի արժեւորմամբ վերլուծաբանը ընդհանրացնելով մաղթում է. «Աստծո խաղաղությունը մշտական թող թեւածի մեր աշխարհում եւ պարգեւի մեզ ստեղծագործելու նույն հավատքը, որով կերտվել են աղոթատները, սուրբ տաճարները Հայոց, որով զարդարվել է երկիրը մեր մշակութային այնպիսի ձեռքբերումներով ու իրագործումներով, որ սերունդները ոչ միայն Հայոց աշխարհի, այլեւ համայն մարդկության, հպարտությամբ են լցվում, եւ որոնք ամբողջացնում են գանձարանը մարդկության մշակութային արժեքների»[26]:

Փաստերը վկայում են, որ վերլուծաբան Հայրապետը քննական անդրադարձ է կատարում ազգամշակութային արժեքների կրոնական հիմքերը պարզաբանող այլ տեսանկյունների եւս: Մասնավորապես նրա հայեցակարգում ցույց է տրվում, որ ուղղակի կամ միջնորդավորված կերպով ներառվելով ազգային ինքնագիտակցության եւ ազգահոգեբանության տարբեր մակարդակներում, ազգամշակութային արժեքների հիմքում ընկած կրոնական գործոնը ազգային ինքնության ձեւավորման եւ վերարտադրության գործառնությանը, ինչպես նաեւ սեփական հաստատունների արմատավորմանը զուգընթաց մեծապես նպաստում է նաեւ **մշակույթների համագործակցության եւ երկխոսության ծավալմանը**: Մեթոդաբանական այդ ելակետի դիրքերից փաստական նյութի վերլուծական արժեւորմամբ նաեւ հիմնավորվում է, որ գործոնների այդ համախումբն էլ դառնում է այն հիմնարար պատճառներից մեկը, որի հենքի վրա պատմականորեն ձեւավորվում է «կրոնական պատկանելության» ընբռնումը եւ որը կյանքում հանդես է գալիս ինչպես անհատի ու ազգության կրոնական պատկանելության գործոնի, այնպես էլ՝ անհատի եւ ազգության ինքնությունը բնութագրող կարեւորագույն հատկանիշի տեսքով: Կրոնի ազգամշակութային գործառնության այս տեսանկյան վերլուծական արժեւորման գործում եւս հիմք ընդունելով ազգային մշակույթի պատմությունը, Գարեգին Բ Կաթողիկոսն անդրադառնում է միջմշակութային հարաբերությունների գնահատմանը եւ փաստում. «Հորդաբուխ ակունքի նման տարածվելով՝ ապրվածճանաչ հոգու լույսը բազում պտուղներ տվեց մեր մշակույթի անդաստաններում: Անհագ ծարավով թարգմանվեցին համաշխարհային մշակույթի գործեր, ծնունդ առան գիտական ու գրական ինքնուրույն արժեքներ: Եւ սկսվեց հայ մշակույթի Ոսկեդարը, որպեսզի այնուհետ լայնահուն ընթանա հայ ժողովրդի մշակութային անընդմեջ ճանապարհը»[27]:

Վերլուծաբանը մանրամասնում է նաեւ, որ միջմշակութային հարաբերությունների ծավալման եւ փոխադարձության արդյունքում «**քրիստոնեական հայ մշակույթը հարա-**

25 «Էջմիածին», 2000, Բ, էջ 5:
26 «Էջմիածին», 2000, Թ, էջ 20-21:
27 «Էջմիածին», 2005, ԺԲ, էջ 6:

զատ ու անբաժան մասն է համաքրիստոնեական մշակույթի: Ինչպես գիտենք, **բոլոր ժամանակներում ազգերը հարստացել են մշակութային առնչություններով ու փոխազդեցությամբ, պահպանելով, սակայն, սեփական հոգու ինքնօրինակությունը եւ այն յուրահատկությունը, որով առանձնանում է ազգը որպես հավաքականություն**: Այս առումով մեր ժողովուրդը իր պատմության դժվարին քառուղիներում առանձնակիորեն է կարեւորել գիրն ու դպրությունը, իր հոգեւոր-մշակութային արժեքները, որոնցով մնացել է միասնական, լինելով սփռված տարբեր երկրներում, մնացել է մեկ ներաշխարհ՝ հայրենի հողի, հայրերի ժառանգության եւ իր Աստծո հետ՝ հույսով, կառուցելու ու ստեղծելու, կյանքի սիրով»[28]: Այս տեսանկյունից չափազանց կարեւոր է նաեւ վերլուծարան Հայրապետի հավասարակշռված ու հիմնավոր այն պնդումը, որ հոգեւոր ու հասարակական կյանքի մերօրյա տեղաշարժերի շարակարգում նույնպես մշակութային առնչությունները չեն կորցրել իրենց համագործակցական դերն ու նշանակությունը: Եւ հակադրվելով մոդեռն եւ հետմոդեռն ծայրահեղություններին, նա համակողմանիորեն հիմնավորում է ավանդության, մասնավորապես՝ քրիստոնեական սիրո եւ համագործակցության հենքի վրա կառուցված հարաբերություններն այն հիման վրա, թե «**Այսօր եւս մշակութային առնչությունները կարող են միայն նպաստել ժողովուրդների երկխոսությանը, փոխադարձ ճանաչմանն ու համագործակցությանը**»[29]:

Ընդհանրացնելով այդ ամենը կարող ենք վստահաբար արձանագրել, որ **հայրենիքը եւ պետականությունը, հավատը եւ եկեղեցին, ազգակրոնական, ազգամշակութային եւ ազգահոգեբանական ինքնությունը այն երեք հիմնասյուներն են, որոնց վրա Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը կամրջում է ազգ-կրոն-եկեղեցի հարաբերությունների իր լուծումները**: Այդ իրողությունը Գարեգին Բ Կաթողիկոսը խորիմաստ եւ համակողմանի հիմնավորված կերպով ներկայացնում է հետեւյալ տեսքով. «Լուսավորիչը երեք լուսո խորաններ բարձրացրեց մեր ժողովրդի կյանքից ներս: **Առաջին լուսո խորանը հայոց պետականության հաստատումն էր**, երբ հիվանդությունից բժշկեց Տրդատ Գ արքային: **Երկրորդ խորանը կանգնեցվեց մեր հայրենիքի մեջ: Դա Սուրբ Սեղանն է Հայոց Եկեղեցու**, որ մշտապես քրիստոնեական Ավետարանի լույսն է ճառագում մեր ժողովրդի զավակաց հոգիներից ներս: **Երրորդ լուսո խորանը հայ դպրոցի լույսի խորանն էր**: Հայ ժողովուրդը Լուսավորիչ Հայրապետի այս պատգամը նվիրականորեն ծրարեց իր հոգու մեջ իր պատմության ողջ ընթացքին»[30]:

Սակայն չպետք է կարծել, թե ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հիմնահարցը Գարեգին Բ Կաթողիկոսի հայեցակարգում դիտարկվում եւ արժեւորվում է միայն պատմականության դիրքերից: Հակառակը, հիմնահարցի համակողմանի ուսումնասիրության միտումով նա վերլուծական ելակետ է համարում բազմահարթ տարածությունը եւ այդ դիրքերից հիմնավորում է նաեւ, որ ազգ-կրոն-եկեղեցի հարաբերության համակարգված լուծումը չի կարող սահմանափակվել լոկ միագիծ մոտեցմամբ, քանի որ հիմնահարցը մեծ կարեւորություն է ձեռք բերել նաեւ ազգային անկախ պետականության գործառնության պայման-

28 Անդ:
29 «Էջմիածին», 2005, ԺԲ, էջ 6:
30 «Էջմիածին», 2000, Ժ, էջ 12:

ներում, որը նաև եկեղեցու ազատ գործունեության երաշխավորն է: Եւ քանի որ քննարկվող համատեքստում բնական, տնտեսական եւ հասարակական-քաղաքական գործոններին համահավասար ազգեցիկ դեր են կատարում նաև լեզվական, մշակութային, կրոնական եւ այլ գործոնները, որոնք ցանկացած ազգային ընդհանրության ինքնորոշման համար միավորման անուրանալի դեր են կատարում, այդ ամենի հաշվարկով Հայոց Հայրապետը հիմնահարցի լուծման գործում առաջադրում եւ հիմնավորում է նշված գործոնների ներդաշնակացման սկզբունքը: Առավել եւս, որ Վեհափառի համար ելակետային է հայրենասիրությունը եւ հայրենիքի նկատմամբ անվերապահ նվիրվածությունը, ինչը հավաստվում է նրա այն պնդում-կոչով, որ «**Հայրենիքը վեր է ամենից եւ ամենայնից: Խոնարհվենք Հայրենիքի սիրո եւ Հայրենիքի հանդեպ մեր պարտքի առջեւ**»[31]: Փաստերը վկայում են նաև, որ **վերլուծաբան Հայրապետի համար հայրենասիրությունը սոսկ կարգախոս չէ, այլ գործունեության ազդակ է եւ նպատակ**: Նրա համար բերկրանք է այդքան թանկ ու նվիրական ազգային պետականության գոյությունը, առավել եւս որ այն կյանքի է կոչվել համազգային ջանքերով: «Այսօր նաև մեր ժողովրդի արի կամքով կանգնեցվել է հայոց պետականության լույսի խորանը, - այդ կապակցությամբ գրում է Վեհափառը, - թեև բազում զրկանքներով, բազում փառապանքներով, բազում կորուստներով, սակայն թանկ ու նվիրական է յուրաքանչյուր հայորդու համար հայոց անկախ պետականությունը, որ տեսիլք ու երազ է եղել դարեր շարունակ հայորդու համար, որ նվիրական բաղձանք է եղել յուրաքանչյուր հայ հոգուց ներս, որով ապրել ու գործել է յուրաքանչյուր զավակ մեր ժողովրդի, ուր էլ որ ապրելիս լինի, ուր էլ որ Աստծո կամքը եւ տնօրինությունը նրան առաջնորդած լինի: Գոհություն եւ փառք ենք առ Աստված բարձրացնում, որ անկուն ոգին ու կամքը մեր ժողովրդի նպատակառողվի թանկ ձեռքբերված հայոց անկախությունը ամրագրելուն...»[32]: Վերլուծական այդ ձեռաչափին լիովին հոգեհարազատ է նաեւ հայրենիքի շինությանն ու ամրապնդմանը զորավիգ լինելու հորդորը, քանի որ ինչպես վերլուծաբանն է պնդում «Որպես ժողովուրդ հերոսական էությամբ ու նկարագրով, անկախությունը կերտած ժողովուրդ՝ այսօր նվիրական պարտք ունենք, ... **մեր քրտինքով, մեր անվերապահ նվիրումով, առավել հանձնառություններով ամրացնել հիմերը անկախ մեր Հանրապետության**»[33]:

Հայրենիքի շինությանը սատարելու ժողովրդին ուղղված Վեհափառի կոչերը խորապես հայրենասիրական լինելուց զատ նաև աշխարհիկի ու հոգեւորի ներդաշնակ գործունեության յուրատիպ ծրագիր է: Եւ ամենից առաջ այն պատճառով, որ հայրենիքին անմնացորդ ծառայելու վեհ նպատակը, վերլուծաբանի համոզմամբ, լոկ բարի մտադրություն չէ միայն: Նա համոզված է, որ այդ գործընթացի իսկությունը չափվում է այն գործի մեծությամբ, որն իր մեջ ներդաշնակորեն միահյուսում է ինչպես պետականության ամրապնդմանը միտված համազգային ջանքերը, այնպես էլ այդ գործընթացի անբաժան մասը հանդիսացող կրոնական գործոնի դերը: Եւ ինչպես բազմաթիվ այլ դեպքերում, այդ պարագայում եւս պատմականության սկզբունքը միահյուսելով «Էջմիածնի Լույսով եւ սիրով շաղկապ-

31 «Էջմիածին», 2001, Ե, էջ 12:
32 «Էջմիածին», 2000, Ժ, էջ 13:
33 «Էջմիածին», 2000, Թ, էջ 34:

ված Հայոց պետության եւ Եկեղեցու առաքելության» հետ՝ հավաստում է, որ հայ ժողովրդի ազատ զարգացման համար գործնականում առկա են բոլոր հնարավորությունները: Ահա թե ինչու այդ ամենի ընդհանրացված վերլուծության հիման վրա Հայոց Հայրապետը հռչակում է ծրագրային այն հիմնադրույթը, թե «Ազատ Հայաստանի հզորության կառույցի հիմնաքարերը դնելու, միասնական ու ծաղկուն Եկեղեցու Խորանի լույսն առատացնելու ժամանակն է այսօր, եւ այդ ժամանակը մեզ է վիճակվել»[34]: Այդ մոտեցման խորաթափանցությունը առավել ևս ակնհայտ է դառնում, երբ փաստական նյութի ընդհանրացմամբ Վեհափառը միաժամանակ հավելում է, որ նշված առաքելությունն իրագործելուն միտված ջանքերի «**հաջողության ամենամեծ գրավականը Հայաստանի ու Արցախի անկախության իրողությունն է**: Արդ, աներկյուղ ու աներկբա, վճռական ու քաջեռանդ, արարող սիրով սրանձնենք վերաշինությունը մեր տան»[35]:

Եւ քանի որ հայ ժողովրդի բնականոն զարգացման ու «Հայոց տան վերաշինության» գործը համազգային խնդիր է, վերլուծաբանն այդ համատեքստում մեկ անգամ ևս անդրադառնում է հոգեւոր գործոնի դերակատարության հիմնահարցին: Եւ աշխարհիկ ու հոգեւոր գործոնների ներդաշնակության հայեցակարգային ըմբռնման դիրքերից այդ գործընթացում եկեղեցական քրիստոնեության դերն արժեւորում է մի շարք տեսանկյուններից: Նախ իր ասպվածաբանական տեսլականին հավատարիմ՝ այդ գործընթացում աշխարհիկի եւ հոգեւորի ներդաշնակման հրամայականը սերտորեն շաղկապում է «հոգեւոր բարձրագույն հեղինակության»՝ Քրիստոսով ճանաչված սիրո ուսմունքի հետ, այնպիսի սիրո, «... որ մշտապես հույս է տածում ու հավատում, որ երկյուղ չունի, քանզի չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում: Սեր, որը վերափոխել ու վերափոխում է մարդկային հոգիներն ու ժամանակների ընթացքը եւ հնչում իբրեւ հորդոր հավերժական», որի պատճառով էլ վերլուծաբանի համոզմամբ «... դրեցինք սիրո կնիքը մեր սրտերին ու կապեցինք որպես բազպան մեր աջին»[36]: Ահա թե ինչու մատնանշելով անուրանալի այն դերը, որը հայրենիքի անկախության եւ անկախ պետականության հաստատման գոհասեղանին ողջակիզել է Հայ Եկեղեցին, Վեհափառը գրում է. «**Հայ Եկեղեցուց ճառագող հավատով զգեստավորվեցին ազատության ու արդարության սերը մեր ժողովրդի, աղբյուրացավ ու ծովացավ ստեղծագործ ուժը հայոց**...»[37]: Ուրվագծելով այդ միասնության իր տեսլականը, վերլուծաբան Հայրապետը հռչակում է իր հայեցակարգին հոգեհարազատ հասարակական իդեալը, որը ձեւակերպում է «հայոց պետությունը քրիստոնեական պետություն ձեւավորել, կերտել»[38] բանաձեւմամբ: Քրիստոնեական, բայց ոչ ամենեին ասպվածապետական:

Այս պարագային պարզապես պետք է հետամուտ լինել վերլուծական մոտեցման դրամաբանական ընթացքին: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հայեցակարգում ազգային պետությունն անփոփոխ կերպով բնութագրվում է որպես հասարակական կառույց, որը գոյավորվում եւ զարգանում է իր սեփական օրինաչափությունների հիման վրա: Իսկ կրոնն այդ գործընթացում դիտարկվում եւ արժեւորվում է որպես հնարավորն իրական դարձնելու

34 «Էջմիածին», 2001, Ե, էջ 11:
35 «Էջմիածին», 2001, Ե, էջ 11-12:
36 Տես **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընկերիր պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 113:
37 «Էջմիածին», 2001, Ե, էջ 9-10:
38 Տես «Էջմիածին», 2000, Ժ, էջ 13:

գործոններից մեկը: Ընդ որում, այդ որակով վերլուծաբանն առաջին հերթին առանձնացնում է «մարդկային հոգիներն ու ժամանակների ընթացքը վերափոխող» քրիստոնեական սերը, որը նրա համոզմամբ սերտորեն շաղկապում է նաև ազգը եւ կրոնը, ինչպես նաև նպաստամղում է դեպի համազգային նպատակների եւ իդեալների իրականացում: Ահա թե ինչու անհնար է չնկատել, որ քննարկվող հայեցակարգում «քրիստոնեական պետության» տեսականն այլ բան չէ, քան «քրիստոնեական հավատքով եւ սիրով միավորված ազգային ամբողջությունը»: Միանգամայն օրինաչափ է նաև, որ այդ համատեքստում Հայրապետը հավաստում է, թե «Մեր հավատի անխորտակ բերդամրոցն է Հայ Եկեղեցին, գայթող ու մոլորեցնող ճանապարհներից մեզ հեռու պահող, Միածնաէջ Սուրբ Խորանի լույսով դեպի Աստված առաջնորդող հոգեւոր Տաճարը, որ հավերժական է՝ հաստատված Աստծո Սիրո վրա, որ «ոչ երբէք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8)»[39]:

Այդ ամենից հետեւում է, որ ազգ-կրոն փոխհարաբերության Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի առաջադրած լուծումները հավասարակշռված մոտեցմամբ հաշվի են առնում հիմնահարցի բոլոր տեսանկյունները: Ինքնին հասկանալի պատճառներով առաջադրված լուծումներում մեծ տեղ է հատկացվում հայ ժողովրդի հասարակական-քաղաքական եւ մշակութային կյանքի բոլոր ոլորտներում կրոնի խաղացած դերի համակարգված արժեւորմանը: Սակայն այդ գործընթացում հավասարապես կարեւորվում են նաև հասարակական-քաղաքական եւ օբյեկտիվ այլ գործոնները: Իսկ դա նշանակում է, որ քննարկվող հայեցակարգում **ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերությունը դիտարկվում եւ արժեւորվում է բազմահարթ տարածության մեջ**: Վեհափառի հայեցակարգային մոտեցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս նաեւ, որ բավականին տարողունակ այդ հիմնահարցը նրա կողմից համակողմանի քննության է ենթարկվում հայ ժողովրդի ազգային կյանքը բնութագրող բոլոր գործոնների շարակարգում: Հետեւաբար միանգամայն օրինաչափ եւ տրամաբանական է, որ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության վերլուծական ուսումնասիրության գործում Գարեգին Բ Կաթողիկոսն օբյեկտիվորեն գնահատում է ինչպես ազգային կյանքի գոյությունը պայմանավորող Հայոց պետականության, քաղաքական ու մշակութային ինստիտուտների դերն ու նշանակությունը, այնպես էլ այդ կառույցների հետ սերտորեն հարաբերակցվող կրոնի եւ եկեղեցու համագործակցական դերը: Վերլուծաբանի այդ մոտեցումը հստակ կերպով արտացոլվել է պետական շինարարության գործընթացի մեկնաբանության գործում, երբ համակողմանի ուսումնասիրվում եւ կարեւորվում են համազգային ջանքերը, իսկ մյուս կողմից փաստարկված ցույց է տրվում, որ կրոնն իր միավորիչ գործառույթով, իսկ Եկեղեցին նաեւ հասարակական-քաղաքական գործունեությամբ օբյեկտիվորեն հանդես են գալիս որպես այդ գործընթացների օրգանական տարր: **Վերլուծական այդ ձեւաչափի շրջանակներում որեւէ գործոնի առաջնություն չի վերագրվում**: Դարձյալ արձանագրվում է հասարակական կյանքում եւ ազգային գիտակցության մեջ գործակցող կողմերի ներդաշնակության կարեւորությունը: Միանգամայն օրինաչափ է նաեւ, որ իր վերլուծական մոտեցումներում Վեհափառ Հայրապետն անփոփոխ հանդես է գալիս հոգեւոր եւ հասարակական գործոնների հավասարակշիռ արժեւորման դիրքերից, շեշտում դրանց կարեւորությունն ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ հո-

39 «Էջմիածին», 2001, Ե, էջ 10:

գեռոր-մշակութային ոլորտներում: Այդ եզրահանգումը կարելի է փաստել բազմաթիվ օրինակներով: Այսպես, Վեհափառն իր հայեցակարգում համակողմանի հիմնավորելով կողմերի ներդաշնակ համագործակցության կարեւորությունը, այդ մոտեցումն ամենից առաջ փաստում է նրանով, որ «Ուր էլ ապրենք, **մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, Հայ Առաքելական մեկ Եկեղեցու**: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ եւ որպես հայ»[40]: Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգային եւ կրոնական «համագործակցական այդ միության» հոչակումը շեշտադրվում է նաեւ այն կապակցությամբ, որ «Այսօր ազատ ու անկախ Հայրենիք ունենք, փոխված են իրավիճակները, եւ հստակ է մեր ընդհանուր նպատակը՝Հայրենիքը զորացնել եւ դարձնել շեն ու բարօր տունը յուրաքանչյուր հայորդու: **Այսօր ավելի մեծ գերխնդիր չկա ո՛չ Եկեղեցու, ո՛չ յուրաքանչյուր հայի համար, որտեղ էլ ապրելիս լինի, եթե ինքն իրեն ընկալում է որպես անդամ հայ հավաքականության**»[41]:

Ահա թե ինչու այդ ամենը հարկադրում են ընդունել, որ ընդհանրական այդ համոզմունքները վերլուծաբան Հայրապետին թույլ են տվել համակողմանի, առարկայական ու հավասարակշռված արժեքային մոտեցում ցուցաբերել ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հիմնահարցին: Մեծապես պետք է կարեւորել նաեւ այն, որ Վեհափառ Հայրապետը ազգային եւ կրոնական արժեքների ներդաշնակ միասնությունը, ինչպես նաեւ կրոնի էության եւ գործառնական դերի հարցերը քննարկում է ինչպես հասարակական հարաբերությունների համատեքստում, այնպես էլ ազգային ինքնության պահպանության եւ մշակութաստեղծ գործունեության տեսանկյունից, ոլորտներ, որոնց գոյությունը եւ գործառնությունը հայ հասարակական եւ մշակութային կյանքում կարեւորագույն դերակատարություն են ունեցել վերջին երկու հազարամյակի ազգային պատմության բոլոր փուլերում: Այդ տեսանկյունից չափազանց հետաքրքրական ու արդիական է ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հավասարակշռված լուծման մեկ այլ օրինակ: Խոսքն այն մասին է, որ օբյեկտիվ ու անկողմնակալ վերլուծությամբ Գարեգին Բ Վեհափառը փաստում է այն իրողությունը, որ հիմնահարցի լուծման գործում մեկնակետային է **հարաբերվող կողմերի ոչ թե հակադրությունը, այլ՝ միասնությունը**: Եւ արժեքային այդ մոտեցումը հիմնավորում է հավասարակշռող այն պնդմամբ, որ «Իր զավակներով է պայծառ Սուրբ Էջմիածինը, իր զավակներով զորեղ՝ Մայր Հայրենիքը», որ մենք բոլորս «զավակներն ենք մեր հնագույն Հայրենիքի ու հոգեւոր մեր Հայրենիքի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու», որի պատճառով էլ աղոթքով ու մաղթանքով պատգամում է փարված մնալ մեր հայրերի սուրբ հավատքին եւ՝ «ձեր հայացքը միշտ ուխտյալ պահեք Հայրենիք տանող ճանապարհներին»:

Այդ ամենը հարկադրում են ընդունել նաեւ, որ ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության Գարեգին Բ Հայրապետի հայեցակարգում մեկնակետային է այն իրողությունը, որ հայ ժողովրդի կյանքում գերիշխող աշխարհայացքի որակով հանդես եկող եկեղեցական քրիստոնեությունը դարավոր տեղայնացման շնորհիվ դարձել է ազգային ինքնության եւ ազգապահպանության գործուն ազդակ: Այդ համատեքստում միանգամայն տրամաբա-

40 «Էջմիածին», 2001, Ե, էջ 32:
41 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 42:

նական եւ օրինաչափ է նաեւ Վեհափառի հայեցակարգային այն մոտեցումը, որով կրոնի ազգահավաք եւ ազգամիավորիչ գործառույթը սերտորեն շաղկապվում է ազգային կյանքի հիմքում ընկած հասարակական եւ քաղաքական գործոնների հետ: Ըստ էության այդ մոտեցումն արդեն իսկ ցույց է տալիս, որ վերլուծաբանի կողմից քննարկվող հիմնահարցի լուծման գործում ներքինն ու արտաքինը, պատմականն ու հավատքայինը դիտարկվում են մեկ ամբողջության մեջ: Ուսանելի է նաեւ այն, որ **վերլուծաբանն այդ միության էությունը լուսաբանում է «եկեղեցու նկատմամբ անձնազոհ սիրո» եւ «հայրենիքի հանդեպ անպայմանավոր սիրո» համադրության դիրքերից**: Եւ միանգամայն օրինաչափ է, որ սկզբունքային այդ մոտեցումը նա լուսաբանում է հետեւյալ կերպ. «Ավարայրով ու Սարդարապատով ենք արիացել, պետականությունը հաճախ կորցնելով՝ իմաստնացել, մեր հայրերի Աստծուն եւ մեր սուրբ նախնյաց հավատքին ապավինած, «ժամադրությունը Հիսուսի հետ» հավատարմորեն պահած՝ նոր դարին հասել եւ Հարության շնչով Հարությունը վերակերտած «Աստծո սեփական ժողովուրդ» որպես՝ անկախ պետականության դրոշն ենք պարզել Հայաստանում եւ Արցախում: Մեր զավակաց կյանքի թանկ գնով ու արյան հեղմամբ վերահաստատել ենք ազգերի մեծ ընտանիքում ազատ, խաղաղ ու ստեղծագործ կյանքով ապրելու անօտարելի մեր իրավունքը»[42]:

Նույնքան արժեքավոր է նաեւ հիմնահարցի լուծման մեկ այլ տեսանկյուն: Խոսքը վերաբերում է այն բանին, որ վերլուծաբանը պատմական եւ հավատքային մոտեցումների համադրության դիրքերից ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերությունը դիտարկում եւ արժեւորում է որպես **խորհուրդ**: Վերլուծական այդ ձեւաչափի մեջ «արյան հեղմամբ ձեռք բերված ազատ կյանքով ապրելու անօտարելի իրավունքը» Վեհափառը համարում է նաեւ «երկնապարգեւ մեծագույն բարիք», «հայ ժողովրդի նկատմամբ աստվածային սիրո դրսեւորում» եւ «նախախնամության պարգեւ», քանի որ համոզված է, թե հայոց պատմությունը փորձությունների ու դժվարությունների պատմություն լինելով հանդերձ, միաժամանակ հերոսացումի, ստեղծումի, ստեղծելով նվաճումի եւ ստեղծելով հաղթելու պատմություն է, Ոգու եւ նվիրումի, աստվածային սիրո ապրումի պատմություն: Ընդ որում, այդ ամենը բնութագրելով որպես «ազգային իրականություն»՝ Գարեգին Բ Վեհափառն ամենեւին էլ չի սահմանափակվում միայն «անցյալի գովաբանությամբ»: Մեր անցյալի պատմությունը այն ելակետն է, որի հիման վրա **վերլուծաբան Հայրապետը նախանշում է ազգային ապագայի ուրվագիծը**: Առավել եւս, որ այդ հարցում նրա վերլուծական մտահորիզոնը առավել ընդարձակվելով իր ոլորտ է ներառում նաեւ արդիականության գործոնը եւ համաշխարհային փորձը: Այդ ամենի հետեւողական ու օբյեկտիվ վերլուծության եւ ընդհանրացման հիման վրա դիմելով հայ ժողովրդին, գրում է. «Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով, ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների նոր պահանջներով: **Ազգային զորեղ պետականությամբ միայն կարող ենք լիարժեք մասնակցություն ունենալ ժողովուրդների բազմակողմ ու հարաճուն համագործակցությանը: Որեմն ո՛վ, եթե ոչ՝ մե՞նք, հոգեւորական ու աշխարհական բոլոր դասերով, ե՛րբ, եթե ոչ՝ այսո՛ր կոչված ենք զորացնելու ազատ ու անկախ մեր Հայրենիքը, միաբանվելու նրա շուրջ եւ համազգային միությամբ կերտելու**

42 «Էջմիածին», 2000, Ա, էջ 68:

հայ կյանքը աշխարհասփյուռ»[43]: Եւ քանի որ նա համոզված է, թե «արդիականության էությունը բնութագրող համակեցության քաղաքակրթական սկզբունքները ձեւավորվել են ազատության, արդարության եւ քրիստոնեական բարոյականի կենդանարար սկզբունքներից», միասնության կոչ է անում եւ հորդորում այդ հիման վրա հաղթահարել ազգային կյանքում տեղ գտած անհանդուրժողականության, անհաշտության, տարակուսների, վարանման ու հուսալքության դրսեւորումները, կոչ է անում մի կողմ նետել եւ ձերբազատվել Հայրենիքը լքելու հիմքում ընկած «մարդկային կյանքի չարախնդությունից»: Ու թեեւ վերլուծաբան Հայրապետի համար հասկանալի են արդարացումները, սակայն դրանք որակվում են «անընդունելի ու անհասկանալի», քանի որ անհարիր են մեր ազգային իրականությանն ու աշխարհընկալմանը: Այդ համատեքստում վերլուծաբանի հայեցակարգը բնութագրող չափազանց հեգաքրքրական ու արժեքավոր մոտեցում է հայ ժողովրդին ուղղված պատգամն ու կոչը. «Նախանձախնդրորեն պահպանել գործելու արի կամքը, լավատեսության ոգին, մեր ժողովրդին հատուկ անընկճելի ստեղծարար ոգին, միմյանց ապավինելու վստահությունը, **որպեսզի Հայրենիքը մեր դառնա կենդանարար արյուն մղող, տրոփող հուժկու սիրտը հայության կյանքի**»[44]:

Վեհափառը հորդորում է նաեւ «հետեւել առաքյալների օրինակին եւ հոգիներում անվհատ ու անվեհեր նորոգելով հավատը»՝ ձեռնամուխ լինել հայրենիքի շենացման վեհ գործին, քանի որ «**Հայրենիքին պարտք ենք ամենքս, մշտապես: Հայրենիքը միշտ իրավացի է՝ սկիզբ եւ ինքնություն պարգեւող իր զորությամբ, իր զավակներին միավորող խորհրդով: Հայրենիքի առջեւ զինաթափ ենք բոլորս**»[45]: Եւ ընդհանրացնելով որպես պատգամ եւ կոչ Հայրապետական խոսք է ուղղում ժողովրդին. «Սիրելիներ. մեկտեղենք մեր ջանքերը, նվիրումն ու սերը, որպեսզի Հարությամբ արշալույսվի յուրաքանչյուր օրը ազգային մեր կյանքի եւ մեր Հայրենիքի»[46], եւ միաժամանակ, որպես բարձրագույն Նվիրապետ հայցում է երկնային շնորհը. «...Տե՛ր, Հարության սքանչելագործ խորհրդով զորացրո՛ւ հայրենյաց սիրո եւ ազգային միաբանության մեր ուխտը, որպեսզի չվարանենք միմյանց համար մխիթարություն լինել եւ գտնենք իրար՝ առանց փնտրելու: Քո ողորմության ներքո անվրդով ու խաղաղ պահի՛ր Հայրենիքը մեր, Եկեղեցին ու ժողովուրդը հայոց: Դարգեւի՛ր մեզ, Տե՛ր, Ճշմարտության Քո Հոգին շնորհազարդող՝ մեր գործերով Քարին ընտրելու, քանզի այնտեղ ես Քո օրհնությամբ, առատաբաշխ Քո պարգեւներով, Քո սիրով»[47]:

Ընդհանրացնելով դժվար չէ նկատել, որ այդ ամենը, ինչպես նաեւ ազգընտիր Հայրապետի հայեցակարգային այլ լուծումների վերլուծությունն ակնհայտ կերպով ցույց է տալիս, որ նա առաջնորդվում է քննարկվող հիմնահարցի լուծման ոչ ավանդական եւ, ինչպես բազմիցս նշվել է, առավել օբյեկտիվ ուղիով: Այդ պնդումը կարելի է փաստել Վեհափառ Հայրապետի հայեցակարգային այլ հիմնադրույթների օրինակով եւս: Մասնավորապես, քննարկվող համատեքստում ազգային եւ կրոնական գործոնների ներդաշնակության գաղափարը հավաստվում է նաեւ հայ ժողովրդին ուղղված Վեհափառի հետեւյալ տողե-

43 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 105-106:
44 Անդ, էջ 106:
45 Անդ:
46 Անդ:
47 Անդ, էջ 107:

րով. «... **ամենքս պարտք ունենք մեր պատմության ու մեր գալիքի առջև, ինքներս մեր՝ մեր ապրած դժվարին, բայց հույսով ու հավատով լի տարիների առջև, այս հողը մեզ համար շահած ու պահած մեր սուրբ նահատակների ու նախնյաց առջև, այս հողը մեզ շնորհած Բարձրյալն Աստծո առջև**: ... **Արդ, չդրժենք սրբազան մեր ուխտը Արարատի ու Սուրբ Էջմիածնի հետ**»[48]: Վեհափառի աշխարհայացքային կողմնորոշումը բնութագրող կարևորագույն փաստերից մեկն էլ այն է, որ կրոնն արժևորելով իբրև հայ ժողովրդի ազգային ինքնության և ազգապահպանության կարևորագույն գործոն՝ նա առաջադրում է նաև համակողմանի հիմնավորված այն մոտեցումը, որ «Արարատի և Սուրբ Էջմիածնի անբաժանության նկատմամբ ունեցած սրբազան ուխտը» **նույնանում է Մայր Հայաստանի և ազգային եկեղեցու անքակտելի միասնության հետ**: Ահա թե ինչու նա անվարան հռչակում է, որ «**Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Մայր Հայրենիքն են շնորհաց աղբյուր մեր գանձարանը, մեր հոգու հանգրվանը, մեր ընդհանուր տունը**»[49]:

Այս պարագայում առնչվում ենք հիմնահարցի լուծման հեռանկարային և միանգամայն հիմնավորված մեկ այլ տեսանկյան: Վեհափառ Հայրապետն իր վերլուծական մոտեցումներով ակնհայտ կերպով շեշտադրում է, որ իբրև հասարակական կյանքի ուրույն ոլորտ կրոնական կյանքն աչքի է ընկնում ընդգծված ինքնուրույնությամբ: Բայց միաժամանակ նույնքան փաստարկված կերպով ցույց է տալիս, որ անդրանցական կողմնորոշմամբ հանդերձ կրոնն իր գործառնական ոլորտ է ներառում նաև օբյեկտիվ իրականության մաս հանդիսացող հասարակական և քաղաքական գործունեության բազմաթիվ գումարելիներ: Եվ պատմական փաստերի հեռանկարային արժևորմամբ նա առաջ է մղում «կրոնական երկբևեռ էներգիան» ազգային և հասարակական կյանքի վերակառուցման և զարգացման հոգեպարգև գործին նպատակամղելու անհրաժեշտությունը. «... **որպէսզի մեր խօսքը չինչի դատարկ ու անտեղի, եւ մեր գործը չլինի արժէզուրկ ու աննպատակ**, - գրում է Վեհափառ Հայրապետն այդ առնչությամբ, - **այլ ծառայի հայրենական մեր կեանքի շինութեանը, քար աւելացնի անկախ մեր Հայրենիքի հզօրութեան կառոյցին, շաղախ՝ հայոց միարանութեանը, լոյս՝ պայծառութեանը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու**»[50]:

Այսպիսով, նվիրապետական բազմաբեղուն գործունեության, հոգևոր ու պրակտիկ բազմամյա փորձի ընդհանրացմամբ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության իր մեկնաբանություններում հիմնարար նշանակություն է վերագրում հայ ժողովրդի ազգակրոնական ինքնության հիմնահարցի տարբեր տեսանկյունների համակողմանի քննական արժևորմանը, ինչը կարմիր թելի նման առկա է նրա հայեցակարգային բոլոր լուծումներում: Անառարկելի է նաև, որ այդ գործընթացում նա առաջադրում և հիմնավորում է ազգային և կրոնական գործոնների՝ Մայր Հայրենիքի և «Քրիստոսի ազատության խաչանիշ դրոշի» ներդաշնակեցման առաջնահերթությունը: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ

48 Անդ, էջ 106:
49 «Էջմիածին», 2001, Ե, էջ 11:
50 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 111:

պետք է համարել վերլուծաբանի խորամիտ պնդումը, թե «Հարության լուսեղեն խորհրդի դրոշմով ստացանք մեր ինքնությունը, Ավետարանով իմաստավորեցինք մեր գոյությունը, հավատացինք կյանքին, արդարին, գեղեցիկին ու ստեղծագործ աշխատանքին: Հարության հավատով վերագտել ենք դարավոր մեր երազը՝ ազգային մեր պետականությունը, եւ թեպետ տագնապներով ու համընդհանուր անվստահությամբ է լեցուն ներկան, Հարության հույսով ենք նայում գալիքին: Սա է մեր իրականությունը»[51]: Ընդ որում, արժեքային այդ մոտեցման բնութագրական որակներից պետք է համարել նաեւ այն, որ Հայոց Հայրապետը ազգային եւ կրոնական գործոնների ներդաշնակ միության հրամայականը դիտարկում է իր բնական ընթացքի մեջ, ուր առանձնահատուկ կարեւորություն է վերագրվում ինչպես հասարակական զարգացման օրինաչափություններին, այնպես էլ հոգեւոր կյանքի առաջնահերթություններին: Ահա թե ինչու վերլուծաբան Հայրապետը հիմնավորված փաստում է, որ «**Ամեն ժողովուրդ ունի իր ազգային մեծ երազը: Մեր մեծ երազանքն ու ձգտումն է, որ այսօր ազատ ու անկախ մեր Հայրենիքը գտնի իր կայուն, ապահով կյանքը,** համայն մեր ժողովրդի համախումբ ջանքերով վերագտնի արարումի իր ուժերը եւ այն ուղղի պետության հզորացմանը ու հասարակության առաջընթացին»[52]: Բնութագրական է նաեւ այն, որ իբրեւ վերջինիս բովանդակային լրացում Գարեգին Բ Կաթողիկոսը հավելում է, որ այդ գործընթացում իր անուրանալի դերակատարությունն ունեցող հոգեւոր գործոնը բխում է **անպարտելի ու արարող ասպվածային սիրուց եւ այդ սիրով պետք է հավատալ Հայրենիքի լուսավոր գալիքին**: Այդ պատճառով էլ նա պատգամում եւ կոչ է անում «Խաչադրոշմ կնիքով մեր հոգու, խաչանիշ պետական դրոշով ազգովի՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս միաբան զինուորագրուենք ու բանակ դառնանք՝ ամրապնդելու մեր ձեռքբերումները, մեր նուաճումները, համատեղ կառուցելու հայոց այսօրն ու վաղուայ նոր օրը»[53]:

Քաջ գիտակցելով, որ հասարակական կյանքը տարբեր համակարգերի եւ կառուցվածքային տարրերի բարդ հարակարգություն է, աստիճանակարգություն եւ ամբողջի ու մասի յուրահատուկ գործառնական ամբողջություն, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հայեցակարգում ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերությունը արժեւորվում է ոչ թե միագիծ, այլ ցիկլային կապի դիրքերից: Այդ մոտեցումը վերլուծաբանի մեկնաբանություններում դիտարկվում եւ արժեւորվում է որպես ազգային եւ հոգեւոր վերածնությանը նպաստող կարեւորագույն նախադրյալ: Ուշադրության է արժանի նաեւ այն, որ այս պարագայում եւս վերլուծաբան Հայրապետն ազգային կյանքի զարգացման վերընթաց գիծը ներկայացնում է ոչ թե աշխարհիկի եւ հոգեւորի տարամետության, այլ ներդաշնակ համագործակցության եւ միասնության դիրքերից, ինչը նրա համոզմամբ վերածվում է ներքին զարգացման շարժիչ ուժի: Եւ ինչպես փաստական նյութն է ցույց տալիս, վերլուծական այդ մոտեցումը կիրառվում է նաեւ շրջադասության միջոցով հասարակական ու անհատական վարքագծի մոտիվները խթանելու եւ որոշակի սահմաններում՝ ուղղորդելու միտումով: Ահա թե ինչու վստահ այն բանում, որ հայ ժողովուրդը հարության հույսով է նայում ապագային, այդ գործընթացում մեծապես կարեւորելով կրոնական գործոնի դերը, Վեհափառը գրում է. «Մի՛ երկնչիր,

51 Անդ, էջ 104-105:

52 «Էջմիածին», 2002, Զ-Է, էջ 14:

53 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 111:

հօր փոքրիկ»՝ ժողովուրդ հայոց: Մեկ անգամ չէ, որ անցել ենք խաչելության ճանապարհը ու չափել մահվան գուբի խորությունը: Եւ ամեն անգամ մեր հոգու հույսի կայծը կրակ է դարձել ու բոցավառվել՝ հառնելու մեր կամքը, հավերժի մեր ոգին»[54]: Եւ անվերապահ մերժելով աշխարհիկն ու հոգեւորը հակադրելու կամ միմյանցից դարանջատելու մոտեցումները՝ հավաստում է նաեւ. «Այո, անվարան է մեր հավատը. դարերի մեջ բազում հոգս ու փորձություն հաղթահարած, բազում մահեր ոտնակոխած եւ միշտ կառուցող մեր ժողովուրդը կերտելու է իր վաղվա լուսառատ օրը, հայոց գալիքը»[55]: Ճիշտ նույն ձեւով Հայրապետը անվարան է համարում նաեւ աշխարհիկի եւ հոգեւորի ներդաշնակ փոխազդեցության սկզբունքը, որի արդյունք է որակվում ոչ միայն «հարության հավատով վերազգած մեր դարավոր երազ» ազգային պետականությունը[56], այլեւ վերջինիս եւ հայ ժողովրդի ապագայաբանական գեսլականն այն հիման վրա, որ անկախ պետականությունը վերահաստատած հայ ժողովուրդը վերստին հայացքը հառել է «... հայրենյաց կյանքի երկնքում բարձրացող Արդար Արեգակի լույսին, որ խոստանում է նոր Արեւագալ, նոր զարթոնք ու վերածնունդ»[57]:

Փաստական նյութի վերլուծությունը աներկբա վկայում է նաեւ, որ Վեհափառ Հայրապետը Հայաստանի բարօրության եւ ազգային միասնության գերխնդրի լուծումն բնականորեն շաղկապում է «նվիրական եւ սուրբ երկու խորհուրդների՝ հայ հոգին ու հավատը մարմնավորող Ս. Էջմիածնի եւ Հայրենիքն ու հայոց պետականությունը խորհրդանշող ասպվածաշնչյան Մասյաց» անքակտելի միասնության մեջ: «**Ուր էլ ապրենք՝ Հայրենիքով ու Սուրբ Էջմիածնով պիտի ապրենք, ազգային արժէքներով ու հայրենի ժառանգութեամբ**, - ազգ-կրոն-եկեղեցի անքակտելի կապը շեշտադրելով գրում է Վեհափառը, - որպէսզի մեր կեանքից ներս թափանցող, ներսից ու դրսից պարտադրուող սին եւ թիւր գաղափարներից, անհարազատ արժէքներից հեռու մնան մեր զաւակները»[58]: Հայ ժողովրդի ազգային եւ հոգեւոր վերածնության գործում ազգային եւ կրոնական կյանքի, Մայր Հայրենիքի եւ ազգային Եկեղեցու ցիկլային կապը փաստող, հասարակական եւ անհատական կյանքը հավատով զորացնելու հավասարակշիռ եւ առարկայական մի այլ հիմնավորում է

54 Անդ, էջ 105:

55 «Էջմիածին», 2001, ԺԲ, էջ 6: Մի այլ կապակցությամբ համազգային կյանքում մատնանշելով աշխարհիկ եւ հոգեւոր գործոնների սերտ կապի անանց նշանակությունը, Հայոց Կաթողիկոսը գրում է. «Ճշմարիտը անկախ Հայաստանն ու ազատ Արցախն է եւ մեր հայրենասիրութիւնը, մեր համերաշխութիւնը եւ միաբանութիւնը» եւ հավելում, որ «Յարուցեալ է այսօր մեր պետականութիւնը, եւ կեանքի բոլոր յանգրուաններում սպասում է մեզ Տէրը՝ սփռելու մեզ վրայ Իր լոյսն ու խաղաղութիւնը, օրհնելու, արդիւնաւորելու մեր ջանքերն ու աշխատանքը»: Այդ ամենի ընդհանրացմամբ վերլուծաբան Հայրապետը նաեւ հորդորում է. «Հոգեւորական, ծնող, պաշտօնեայ, մտաւորական եւ ուսուցիչ, ամենքս սիրտ ու հոգի պիտի ներդնենք, որպէսզի հաւատով նորոգուի ու նախնեաց սրբութիւններով շողշողայ հայի հոգին, եւ Հայրենիքում ու Սփիւռքում մեր զաւակների աչքերի մէջ միշտ ճանաչենք ասպուածատես հայեացքը հառատի մեր Հօր եւ Լուսատրչի՝ Սուրբ Գրիգորի, տեսնենք Ասպուծով շնորհալի դէմքերը Սուրբ Սահակ եւ Մաշտոց մեր մեծ Վարդապետների, Ասպուծով աներկիւղ զուարթուն ոգին Սուրբ Վարդանի ու Վարդանանց». **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 135:

56 Այդ փաստն են վկայում Վեհափառի հետեւյալ տողերը. «Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո» մահն արհամարհող հարցադրումով, կյանքի, **հարության նույն հավատով եւ ինքնարթնության բոցավառ ոգով համախումբ**՝ հայ ժողովրդը ազատության իր իրավունքն է հաստատել Հայրենիքում եւ պաշտպանել արդարությունը Արցախում: **Մա՛ս ենք իրողություն է, արդի մեր իրականության էական ու նշանակալի, մեծարժեք այն մասը, որի փառքը երբեք չի կարող խամրել**». **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 105:

57 «Էջմիածին», 2001, Ժ-ԺԱ, էջ 36:

58 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 135:

Գարեգին Բ Վեհափառի հայեցակարգային հետեւյալ պնդումը. «Սիրելի ժողովուրդ հայոց, խաչելության մեր երկար ճանապարհներն ավարտվել են Հարության առավոտով, եւ Հարության հույսի նոր լուսաբաց է ազատ մեր Հայրենիքում ու ազգային կյանքում: ... **Նայենք խաչքար դարձած մեր ժայռերին, երկնահայաց գմբեթներին հայոց եկեղեցիների, եւ նրանք պիտի խոսեն մեզ մեր հայրերի շուրթերով, պիտի խոսեն ու պատգամեն միասնական լինել Հայրենիքի ազատության սիրո եւ Սուրբ Խաչի ամենազոր թեւերի ներքո, եւ մեր միաբանությունը պիտի լինի մեր զորությունը**»[59] եւ հավելում է. «... **համախումբ ազգային մշակույթով ու արժեքներով, ազգային նպատակներով, այնպես համախումբ, որ ամեն հայի մեջ կարողանանք տեսնել պատկերը Սուրբ Էջմիածնի եւ պատկերը Մայրաց**»[60]: Անվիճելի է, որ քննարկվող համատեքստում չմերժելով հանդերձ բազմակիությունը, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հետեւողականորեն հիմնավորում է ազգայինի եւ կրոնականի ներդաշնակ միությունը: Ուղենշելով վերլուծական այդ մոտեցման տրամաբանությունը, վերլուծաբանն առաջադրում է մի այլ փաստարկ, այն, որ «... Հարության նոր արշալույս է բացված ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս՝ ներշնչուն նոր կյանքի սպասումով՝ առաքինությամբ շենշող, ապահով, բարօր ու երջանիկ կյանքի»[61] եւ միաժամանակ պարզաբանում է. «Մեր ճանապարհը Հայոց Մի, Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ Հարուցյալ Քրիստոս քարոզող, Հարության հավատի մեջ, Հարության ճանապարհին մեզ հաստատող ու ապրեցնող»[62]: Եւ համադրելով ու ընդհանրացնելով այդ ամենը Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավունքով հավաստում է. «**Հավատում ենք, որ մեր Սուրբ Եկեղեցին եւ հավատավոր ժողովուրդը նորանոր իրագործումներով պիտի շարունակեն եռանդ ու ջանքեր ներդնել իրենց ազգային կյանքում՝ միասնական ոգով, գալիքի հանդեպ հաստատուն հավատով եւ հայության ու Հայրենիքի վաղվա օրը առավել պայծառ ու շեն դարձնելու տեսիլքով**»[63]:

Այս ամենը վկայում են նաեւ, որ Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետը խնդրո առարկա փոխհարաբերության հիմնահարցերը քննարկում է համակարգային ամբողջության մեջ, այլ կերպ ասած՝ նրա առաջադրած հայեցակարգը քննարկվող հիմնահարցի համակողմանի հիմնավորված եւ ավարտուն արժեւորում է: Եւ որ ամենակարեւորն է, Վեհափառի առաջադրած հայեցակարգը չի սահմանափակվում միայն քրիստոնյա Հայաստանի պատմության պատմաքննական արժեւորմամբ: Թեեւ նրանում ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության համակողմանի արժեւորումները հենված են պատմական անցյալի իրողությունների արժեւորման վրա, սակայն վերլուծաբանի հայացքն ավելի շատ կանգ է առնում ներկայի եւ հատկապես ապագային միտված հարցերի այն համախմբի արժեւորման վրա, որոնք ուղղակի կամ միջնորդավորված կերպով կապված են պետական շինարարության, Հայաստանի Հանրապետության գործառնության, ինչպես նաեւ հայ ժողովր-

59 Անդ, էջ 125:

60 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 12:

61 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 117:

62 Անդ, էջ 117: Ազգային ինքնագիտակցության եւ ինքնության հրամայականներով մտահոգ Հայրապետը հավելում է նաեւ. «Երբ Հարության նոր առավոտ է, ինչպե՞ս լռությամբ անցնենք կեղծիքի կողքով եւ մեր անտարբերությամբ ու անփութությամբ թույլ տանք, որ մեր կյանքը դառնա կեղծ արժեքների ու գաղափարների, անօրեն գործարքների վաճառատեղի», անդ:

63 «Էջմիածին», 2006, Թ, էջ 9:

դի հոգեւոր անվտանգության համալիր հիմնահարցերի հետ: Վերլուծաբան Հայրապետի կողմից այդ շրջանակներում կարեւորվում է նաեւ **հիմնահարցի բարոյական տեսանկյունը**, ավելի ստույգ՝ համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտի ձեւավորմանը միտված արժեքային մոտեցումները: Ահա թե ինչու նա հրամայական է համարում ազգային-հասարակական կյանքում քրիստոնեական բարոյականության վերածնունդը, ինչը փաստում է հետեւյալ տողերով. «Քրիստոնեական բարոյականի վերածնունդը այսօր համազգային խնդիր է, եւ յուրաքանչյուրիս մտահոգության առարկա, քանզի առանց սիրո, առանց ազնվության, արդարամտության ու օրինավորության միայն կարճատեւ կարող են լինել բոլոր ձեռքբերումներն ու հաջողությունները, տնտեսությունը՝ զուրկ ազատ ու ներդաշնակ զարգացումից, գիտությունը՝ հեռու կյանքի առաջընթացին ծառայելու իր կոչումից, արվեստը՝ անհոգի ու միայն նմանակող: Առանց Փրկչի ոչինչ հարատեւ ու երջանկաբեր չենք կարող ստեղծել»[64]: Այդ տեսանկյունից անհնար է չհամաձայնել Գարեգին Բ Կաթողիկոսի խորիմաստ եւ ընդհանրացնող այն պնդմանը, որ «**Մեր ձեռքում է մեր պետականության վաղվա օրը, մեր ձեռքում է ճակատագիրը մեր ժողովրդի: Որքան որ գուրգուրանք ու սեր տածենք Հայրենյաց նկատմամբ, այնքան Հայրենիքի սերը կտարածվի հայորդյաց վրա ու կլինի նրանց վահան ամրության եւ հաղթության: Որքան զորացնենք մեր Հայրենին, այնքան պիտի զորանանք որպես ազգ ու ժողովուրդ, որպես երկիր ու որպես պետություն**»[65]:

Փաստ է նաեւ, որ այս պարագայում եւս Վեհափառ Հայրապետի վերլուծական ելակետն իր աշխարհընկալման համար նվիրական ու սուրբ խորհուրդների՝ Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի ու հայոց պետականության ներդաշնակ միասնության գաղափարն է: Ընդ որում, քննարկվող հիմնահարցի արժեւորումներն առավել ամբողջական են դառնում, երբ վերլուծաբանն այն դիտարկում եւ գնահատում է ապագայաբանության պրիզմայով: Փաստական նյութի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Գարեգին Բ Վեհափառի Հայրապետի վերլուծական մոտեցումներում Հայոց պետականության ապագան ուրվագծվում է որպես միասնական, բարգավաճ, բարօր եւ հզոր, որով պայմանավորվում են նաեւ ազգի հոգեւորոգության խնդիրները: Այդ մոտեցմանը հոգեհարազատ է հատկապես վերլուծաբանի ծրագրային կոչը՝ պայծառ պահել «Հայոց Մայր Հայրենիքի նոր կյանքի տեսիլքը» այն պարզ պատճառով, որ «Հայաստանի անկախությունը եւ Արցախի ազատագրությունը յոյսի դռներ են բացել արդարության յաղթանակի, հայրենի հողում մեր ժողովրդի ապահով կեանքի ու արարումների, որոնք պիտի լինեն ի Քրիստոս մեր հաւատի նոր վկայութիւններ»[66]: Եւ, որպեսզի ոչ մի պատրանքի տեղ չմնա, պարզաբանում է նաեւ, որ Քրիստո-

64 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 117-118: Մանրամասնելով այդ մոտեցումը վերլուծաբանը հավելում է նաեւ, որ մեր ազգային բարոյահոգեբանական արժեհամակարգի հիմքում Քրիստոսն է, քանի որ «Քրիստոս է ճանապարհը, «աղբյուր կենաց եւ բաշխող շնորհաց». «… ով Ինձ հաւատում է, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում» (Յովհ. ԺԴ 12), - ասում է Տերը: Լավը լավ կոչող, վատը՝ վատ, բարին չարից տարբերող գործերն են դրանք, Հարության տեսիլքով ներշնչուն գործերը, հաղթանակող, հրաշածին, անհնարինը հնարավոր դարձնող ու Հարությամբ շնչող գործերը», անդ, էջ 118:

65 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 21:

66 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 139:

սին ծառայելը ճշմարտությունը, բարին գործելու եւ մարդկային հարաբերությունները սիրո հիման վրա կառուցելու ծառայություն է, իսկ այդ ամենի բուն իրագործումը հրամայաբար պահանջում է հրաժարվել այն ամենից, «... ինչ պիտի խանգարի մեզ յետեւելու Նրա լոյս ընթացքին, Նրա ազատարար ընթացքին: **Ազատութիւնն այն մեծագոյն շնորհն է, որի մէջ պիտի պտուղներ տան մեր յոյսերն ու ձգտումները**՝ կառուցելու խաղաղ ու բարօր կեանք, ազատ հասարակութիւն: **Մեր Հայրենիքի ազատութիւնը ոչ միայն պիտի պաշտպանենք, այլեւ ազատութիւն դարձնենք իւրաքանչիւրիս համար: Ազատութիւնը բարու մեր ընտրութիւնն է, որը նաեւ պայքար է չարի դէմ:** Քրիստոսասէր, ճշմարտասէր մեր գործերով պիտի մեր հողից վերացուեն աղքատութեան եւ օրինազանցութեան չարիքը, մեր իրականութիւնից դուրս մղուեն անտարբերութիւնն ու անհանդուրժողութիւնը եւ հաստատուեն ճշմարիտ մարդասիրութեան բարիքները: **Մեր եղբայրութեան մէջ, մեր արդարութեան մէջ, մեր սիրոյ մէջ է, որ պիտի յաջողուեն մեր ծրագրերն ու գործերը՝ ուղղուած մեր Հայրենիքի շինութեանն ու զօրացմանը, ընկերային վերափոխութեանը, Սփիւռքում ազգային կեանքի պահպանութեանն ու զարթօնքին, մեր զաւակների կրթութեանը, մեր մշակոյթի զարգացմանը եւ մեր ժողովրդի բոլոր իղձերի իրականացմանը**»[67]:

Այդ ամենից դժվար չէ հետեւեցնել, որ **առաջադրված լուծումներից յուրաքանչյուրի հիմքում ընկած է հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու միասնական շահերի ներդաշնակ համագործակցության ուսմունքը**: Ապագային միտված այդ մտահղացումն իրագործելու մարտավարական ծրագիր կարելի է համարել Վեհափառի առաջադրած մեկ այլ արժեքային պնդում, որ «Անհանդուրժողութիւնը, ատելութիւնը, առճակատումը ճանապարհ չեն վերացնելու մեր կեանքի արատաւոր երեւոյթները, վճռելու ազգի առջեւ ծառացած խնդիրները: Դրանք նոր վէրքեր են աւելացնում եւ նոր բարդութիւններ, սպառնալիքներ յաւելում մեր կեանքին: Մենք խնդիր ունենք հոգալու, որ մեր իրականութիւից վանուեն ամէն չարահնար ու ստայոդ խօսք, արարք ու ընթացք: **Հարկ ի վերայ մեր կայ՝ նախանձախնդիր լինել, որպէսզի մեր իրականութեան մէջ ճանապարհ հարթեն ճշմարիտ եղբայրսիրութիւնը, արդարամտութիւնն ու օրինայարգութիւնը, հաւատն ու վստահութիւնը, հաշտութեան ու խաղաղութեան հոգին: Անընաւազ դարձնենք մեր ջանքերը՝ ի սէր մեր պետականութեան ամրութեան, մեր երկրի անընդմէջ առաջընթացի, որպէսզի յաղթահարենք մեր կեանքը խանգարող դժուարութիւնները, եւ յառնի մեր Հայրենիքը զօրութեամբ, որը յոյսն է մեր ժողովրդի միացեալ կեանքի եւ յարատեւութեան**»[68]: Առավել ես, որ ինչպես վերլուծաբան Հայրապետն է փաստում, նորացման եւ կատարելագործվելու մերօրյա կոչերը դեռեւս հեռու են հասարակական կյանքը հումանիզացնելու, մարդու ներաշխարհի «տիեզերական սահմաններն ընդարձակելու», կյանքի որակը բարձրացնելու, հավասարության եւ եղբայրության բարոյական սկզբունքներն ամենօրյա կենցաղ դարձնելու գործնական քայլերից: Ահա թե ինչու նա մատնանշում է «հին մարդու» գործունեության հետեւանքով «չարիքի վերարտադրության» շարունակական գործընթացը եւ պնդում, որ դրա հետեւանքով հասարակական կյանքը դե-

67 Անդ, էջ 139-140:
68 Անդ, էջ 168:

ռեւս ամոքված չէ թշվառություններից, արհավիրքներից, պատերազմներից ու բացասական այլ երեւույթներից: Այդ հիման վրա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը խորիմաստ քննությամբ առաջադրում է այն տեսակետը, թե «Բոլոր ժամանակներում, նաեւ մեր օրերում մարտահրաւէրներին ընդառաջ ելնելու, ընկերային-քաղաքական դիմակայութիւնները կանխելու, պատերազմական արհաւիրքները յաղթահարելու համար բաւական չեն սոսկ նիւթական միջոցներն ու հնարաւորութիւնները, զուտ աշխարհային ըմբռնումներն ու գործելակերպերը: **Այսօր խաղաղ, արդար ու մարդասէր աշխարհի համար պիտի գինուել հոգեւոր սպառազինութեամբ, քան մահաբեր զէնքերով: Պիտի վերցնել խաչը եւ գնալ Տիրոջ եկեւեցի, իրագործել բարին նոյնիսկ արգելքների մէջ, երկրպագել Խաչուածին անգամ խաչուած լինելով, հոգու եւ հոգեւորի քարանձաւից դեղաշարժուած տեսնել քարն անհաւատութեան**»[69]: Առաջադրված հայեցակարգային ըմբռնումներին լիովին հոգեհարազատ է նաեւ արժեքային այն մոտեցումը, որ «Դժվարություններ ապրող մերօրյա Հայրենիքը վաղը՝ բարօր, բարգաված ու հզոր, պիտի միավորի իր որդվոց եւ ոգեշնչի ու փայլ հաղորդի հայ կյանքին աշխարհասփյուռ, - եւ այդ տեսլականի վրա է հենված նաեւ Հայրապետական պատգամը, - Ապավինենք մեր միասնության արարող զորությանը եւ հավատով նայենք հայոց պայծառ գալիքին»[70]:

Գարեգին Բ Կաթողիկոսը համոզված է նաեւ, որ հասարակական պրակտիկան չի կարող լիակատար հումանիզացվել առանց հոգեւորի զուգորդության, քանի որ «...գիտատեխնիկական արդի նուաճումները, ժողովրդավարութիւնը, անհատի եւ ազգի իրաւունքներն ու ազատութիւնները, գերակայ արժէքներ հռչակած գաղափարախօսութիւնները անբաւարար եղան պատասխաններ տալու մարդկութեան առջեւ ծառացող խնդիրներն ու մարտահրաւէրներին եւ անբաւարար պիտի լինեն, եթէ Աստուած չի բնակուում մեր մէջ, եթէ Աստուած չի գործում մեր կեանքում, եթէ չի կարեւորուում հոգեւորը, հաւատքն ու սրբութիւնը...»[71]: Ահա թե ինչու հիմնահարցի լուծման համար վերլուծաբանն առաջադրում է իր աստվածաբանական տեսլականին եւ տեսական աշխարհընկալումներին հոգեհարազատ այն տեսակետը, որ «**Հաւատով է սկիզբ առնում Փրկչի հետ մեր յարուցեալ կեանքը, հաւատով զօրանում ու արգասաւորուում: Հաւատով անձնուիրումը դառնում է բնական, մերձաւորի հանդէպ սէրը՝ երջանկութեան եւ ուրախութեան ակունք: Յարութեան խորախորհուրդ հրաշքն է այս, միշտ դ է պ ի վեր, դէպի երկնայինը, ճշմարիտը, արդարն ու բարին**»[72]: Եւս մեկ բնորոշ առանձնահատկություն: Գարեգին Բ Կաթողիկոսի առաջադրած ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հայեցակարգում անվերապահորեն մերժվում է ազգային եւ կրոնական գործոնների, Հայոց պետականության եւ Եկեղեցու տարանջատ եւ կամ հակադիր զարգացումների վերաբերյալ տեսակետները: Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված տեսակետները Հայոց ընդհանրական Նվիրապետի կողմից անընդունելի են այն պատճառաբանությամբ, որ անկախ պետականության վերականգնման եւ Հայաստանում պետա-

69 Անդ, էջ 151:
70 «Էջմիածին», 2001, Ե, էջ 32:
71 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հարընկրիր պաշտոնական (1999-2009 թթ.), էջ 155:
72 Անդ, էջ 144:

կան շինարարության գործընթացներն իրենցով օբյեկտիվորեն պայմանավորել են նաեւ Հայ Եկեղեցու վերազարթոնքը եւ հոգեւորոգության մերօրյա գործընթացները: Ընդսմին, վերլուծաբանի մոտեցումներում երկմիասնական այդ գործընթացը ոչ միայն դիտարկվում եւ արժեւորվում է հասարակական ու հոգեւոր պահանջմունքների արտացոլման, այլեւ վերջիններիս դինամիկ փոփոխության համատեքստում, որտեղ ասպվածաբան Հայրապետը համոզված կերպով հիմնավորում է նշված գործընթացների շարունակականությունն ու անշրջելի բնույթը: Համոզված, որ ազգային կյանքում բազմադարյա գործունեության արդյունքում կրոնը նույնացել է հայ ինքնության հետ, դարձել է ազգը միավորող Եկեղեցու, ազգը պահող Հայրենիքի սեր, ընտանիքի նկատմամբ անձնազոհ նվիրում եւ հավատարմություն, վերլուծաբանը հավելում է նաեւ, որ քրիստոնեական սերը երկունքով է լցրել հայ հոգու անդասպանները, որն առատորեն պտղաբերել է՝ միշտ հաղորդ քաղաքակրթությունների առաջընթացին[73]: Միաժամանակ նա փաստում է, որ մեզանում եկեղեցական քրիստոնեությունը նոր զարթոնք է ապրում ազգային պետականության շնորհիվ եւ որ «... մեր երկրում, պետականության հովանու ներքո նոր շունչ ու նոր ոգի է ստացել Մայր Եկեղեցու առաքելությունը»[74]: Ահա թե ինչու ասպվածաբան Հայրապետի համար աներկբայելի է նաեւ, որ «... Հայաստանի անկախացումով սկզբնավորված հոգեւորոգության շարունակական ընթացքը անկասելի է»[75]:

Փաստ է, որ Գարեգին Բ Հայրապետի համար ինչպես Ազգը, այնպես էլ Կրոնն ու Եկեղեցին բնութագրվում են ինքնությամբ եւ ներքին զարգացման օրինաչափություններով, սակայն անառարկելի է նաեւ, որ նրանց փոխհարաբերության հիմնարար սկզբունք է համարվում **ազգ-կրոն-եկեղեցի մեկության եւ ներդաշնակ համագործակցության գաղափարը:** Եւ դատելով փաստական նյութից, ինչպես հայեցակարգային այլ լուծումներում, այս պարագայում եւս վերլուծաբանի առաջադրած տեսակետները եւ արժեքային լուծումները հենվում են պատմական իրողությունների անաչառ արժեւորման վրա: Այդ եզրահանգումը հիմնավորելու լավագույն օրինակ է հետեւյալ պնդումը. «**Բավական է միայն հետադարձ մի հայացք նետենք դեպի մեր պատմությանն ու անցյալին, եւ մեզ համար կհասկանալի ճշմարտությունը՝ մեկ Ազգի, մեկ Հայրենիքի ու մեկ Եկեղեցու անպարտելիության, անհաղթելիության ճշմարտությունը, իսկ հավաքական այդ ուժը գոյանում է ոչ այլ կերպ, քան ողջ ազգի՝ հավատավոր մեր ժողովրդի զավակների ամբողջության նկատմամբ յուրաքանչյուրիս ունեցած սիրաշաղախ պատասխանատվությունից ու պարտավորություններից**»[76]:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության հայեցակարգային լուծումները սերտորեն շաղկապում է ինչպես քննարկվող հիմնահարցի հասարակական, այնպես էլ հոգեւոր հիմքերի գործառնական սահմանների համակարգված վերլուծության եւ՛ ասպվածաբանական, եւ՛ տեսական ընդհանրացնող վերլուծության վրա: Հայոց ընդհանրական Նվի-

73 Տե՛ս անդ, էջ 113:
74 Անդ, էջ 213:
75 «Էջմիածին», 2002, ԺԱ-ԺԲ, էջ 21:
76 Անդ:

բապետը հեղեռղական քայլերով «**համազգային հրամայականների** (հասարակական կյանքի)» համատեքստում բացահայտում եւ արժեւորում է «**հավատավոր գործերի**» (հոգեւոր կյանքի) դերը եւ նշանակությունը: Ընդսմին, նա համակողմանիորեն հիմնավորում է, որ ազգային կյանքը պայմանավորող այդ երկու ինքնուրույն ոլորտները աչքի ընկնելով ինքնուրույնությամբ, ուրույն ներքին կյանով եւ փոփոխության ու զարգացման ինքնատիպ տրամաբանությամբ, ազգային-հասարակական կյանքում հանդես են գալիս օրգանական միության եւ գործակցական ներդաշնակության մեջ: Վերլուծական ելակետ ունենալով «մեկ Ազգ, մեկ Հայրենիք եւ մեկ Եկեղեցի հավաքական ուժի» կարգախոսը, Գարեգին Բ Կաթողիկոսը օբյեկտիվ եւ հավասարակշռված մոտեցմամբ ուրվագծում է այդ փոխհարաբերության միանգամայն ուրույն եւ ավարտուն հայեցակարգ, որում քննարկվող ոլորտները «ստեղծագործ մղման մեջ են դրվում» իրենց պատմականության եւ դինամիզմի բոլոր նրբերանգների համակարգված եւ ավարտուն ուսումնասիրության, ինչպես նաեւ առանձնության եւ համագործակցական փոխադարձության մեջ: Վերլուծական այդ շրջանակներում մեծ կարեւորություն է տրվում հարաբերակցվող ոլորտների ազգամիավորիչ, ազգապահպան, մշակութաստեղծ եւ այլ գործառույթներին: Օբյեկտիվ եւ հավասարակշռված աստվածաբանական եւ գիտատեսական անդրադարձ է կատարվում նաեւ ազգային ինքնության եւ հոգեկերտվածքի ձեւավորման, պահպանման եւ վերարտադրության գործում ազգային հասարակական-քաղաքական եւ հոգեւոր կյանքը բնութագրող նշված ոլորտների դերին:

Հավատքի վրա հենված կրոնը որակելով որպես «Աստվածատուր պարգեւ» եւ «հոգու վեհացում», հեղեռղական ու հաջորդական քայլերով վերլուծաբան Հայրապետը բացահայտում եւ ի ցույց է դնում կրոնի անանց արժեքն այն հիման վրա, որ վերջինս բովանդակում է հոգու կատարելության ձգտումը եւ պրակտիկ կյանքում մարդկանց նպատակամղում է դեպի կատարելություն: Համահունչ մոտեցմամբ մանրամասնվում է նաեւ կրոնի բարոյական եւ գործառնական հիմնարար դերն ու նշանակությունը հասարակական կյանքի, մշակույթի, կենցաղի, ամուսնաընտանեական եւ ազգային կյանքը բնութագրող այլ ոլորտներում: Պատմական փաստերի գիտատեսական ըմբռնման եւ աստվածաբանական մոտեցումների համադրությամբ ցույց է տրվում նաեւ, որ այդ ճանապարհով են ձեւավորվել մեր ժողովրդի ինքնության բովանդակային ու ներքնապես անբաժանելի տարրերը հանդիսացող ազգակրոնական ավանդույթները: «2000 տարի Յարուցեալ Քրիստոս քայլում է մեր հողում, մարմին առնում մեր արարումներում, ազատութեան բաղձանքում, խաղաղութեան երազում, բարիք ստեղծելու ձգտումներում, - այդ կապակցությամբ վստահեցնում է Վեհափառը եւ հավելում, - Որպէս քրիստոնեայ առաջին պետութիւն եւ ազգ՝ 17 դար մեր ժողովուրդը Յարութեան լոյսը դարձրել է համազգային իր կեանքի փարոսը, Յարութեան յոյսով զինավառ՝ նաւարկել է խութերի ու որոգոյթների միջով, Յարութեան հաւատով կոփել խաւարը մերժելու, մահեր յաղթելու իր կամքը: 1700 տարի ... Սուրբ Էջմիածինը Յարուցեալ Փրկչի էջքի խորհրդով շաղախն է հայոց միաբանութեան»[77]: Քննարկվող հայեցակարգում համազգային կյանքի միաբանության, ինչպես նաեւ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կրոնականին զուգընթաց մեծապես կարեւորվում է նաեւ աշխարհիկ գործոնների դերը, եւ այդ հիման վրա առաջադրվում է ազգայինի եւ կրոնականի ներդաշնակ համագործակցության

77 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 109:

եւ փոխադարձության ուսմունքը: Եւ այդ համատեքստում անուրանալի է, որ Գարեգին Բ Կաթողիկոսի հայեցակարգում ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության արժեւորումը սերտորեն շաղկապվում է հասարակական-պատմական եւ հասարակության հոգեւոր կյանքի անցյալ ու ներկա իրողությունների առարկայական, անկողմնակալ վերլուծության հետ: Ահա թե ինչու Վեհափառ Հայրապետն աղոթք է հղում առ Աստված, որպեսզի «... **աշխարհասփյուռ ազգը հայոց Մայր Հայրենիքի աստվածպարգեւ հողից մշտապես առնի իր բազկի ուժը, իր մտքի թռիչքը, իր հոգու զորությունը» եւ որ Աստված պահապան լինի Հայոց պետությանը, հայ ժողովրդին եւ Հայոց Եկեղեցուն**[78]: Ազգային եւ կրոնական գործոնների ներդաշնակ համագործակցության եւ սերտ միասնության օբյեկտիվ ու հավասարակշռված ըմբռնումով Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորում է նաեւ. «Արդ, ուրեմն չթերանանք եղբայրասիրության մեջ, խաղաղության փնտրումի ճանապարհին, չվարանենք միմյանց սատարելու, դժվարությունների մեջ համբերելու, հավատավոր գործերով ապրելու: **Չուշանանք միաբանվելու, չպարտվենք հող հայրենին պահելու եւ շենացնելու, համազգային հրամայականներին պատասխաններ գտնելու, մեր նախնյաց ու մեր երազները իրական դարձնելու գործերում: Հոգու ողջ հանձնառությամբ սպանձնենք մեր ժողովրդի գալիքի պատասխանատվությունը՝ ժողովուրդների մեծ ընտանիքում հարատեւելու հաստատուն կամքով**»[79]:

Աշխարհայացքային ընդհանրացնող այդ դիրքերից Վեհափառն առաջադրում եւ համակողմանիորեն հիմնավորում է ոչ միայն ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության ներդաշնակ համագործակցության ուսմունքը, այլեւ նախանշում է այդ գործակցության ապագայաբանական տեսանկյունն այն հիման վրա, որ «Հայոց կյանքի հորիզոնի վրա նոր արեւածագ է, նոր ուժգնությամբ է ճառագայթում հույսի ու հավատի լույսը մեր կյանքի վրա: Մենք այս ժամանակի օրհնյալ զավակներն ենք, որ առավելաբար պարտք ունենք մեր հայրենիքի այդ լույսը, մեր հայրենիքի ապագայի հանդեպ հավատքը առավել զորացնելու, ամրացնելու, անսահանք դարձնելու, անդառնալի դարձնելու»[80]: Եւ իր աստվածաբանական տեսլականին համահունչ քրիստոնեական հավատի, սիրո եւ հույսի անխախտ միության դիրքերից հոչակում է. «... այդ ոգով պիտի շարունակենք ապրել՝ յաղթահարելու համար մեր առջեւ ծառացող հրամայականները, պաշտպանելու համար ազատութեան, արդարութեան եւ իրաւունքի, ազնուութեան ու մարդասիրութեան արժէքները, որոնցով պիտի շարունակի խնամուել աստուածասէր հոգին մեր ժողովրդի, որոնցով պիտի զորանայ մեր կեանքը ի Հայաստան եւ ի Սփիւռս: Արդ, առաջ ընթանանք ուխտաւորի անկուն հաւատքով եւ Աստծոյ օրհնութեան ներքոյ միշտ գործենք սիրով միաբան ու կամքով միասնական ...»[81]:

78 Տե՛ս «Էջմիածին», 2000, Ա, էջ 48:
79 Անդ, էջ 11:
80 «Էջմիածին», 2007, ԺԱ, էջ 41:
81 **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հատընտիր պաշտոնականք (1999-2009 թթ.), էջ 164: